Արդյոք ք հնարավոր է այդպիսի շրջադարձ, և ինչ մենք պետք է անենք, որ այն տեղի ունենա: Այս հարցին պատասխանելու համար, սկզբից ցանկալի է անդրադառնալ մեր ոչ վաղ պատմությանը:

1992 թվականի ամռանը, նորանկախ Հայաստանի և Արցախի Հանրապետությունները բախվեցին իրենց գոյության առավել սուր ճգնաժամին հետևում էր Թաքսիլի Շուշիի փառապանծ ազատագրումը, հակառակորդը նվաճել էր Մարտակերտի շրջանի մեծ մասը, գրավել էր Արծվաշենը, պատրաստվում էր կտրել Լաչինի միջանցքը, Երեւանում իշխանությունը խուճապի մեջ էր և Էմիսարներ էր ուղարկում Բաքու խաղաղություն խնդրելու: Տառացիորեն կես տարի հետո, սակայն, հայկական ուժերը ազատագրեցին Մարտակերտը, զարգացնելով հակահարձակումը, ազատագրեցին Քարվաճառը, և հակառակորդին հետ շարտեցին Լաչինի մատույցներից: Հակառակորդի փախչող բանակը շրջվեց և գնաց «նվաճելու» Բաքուն, և առաջացած իշխա-

նության վակուումից օգտվելով, հայկական ուժերը հետագա մեկ տարվա ընթացքում ազատագրեցին բոլոր այն տարածքները, որոնք դարձան Արցախի Հանրապետության երկարաժամկետ անվտանգության հիմնական գրավակներ:

Ինչ փոխվեց այդ վճռական կես տարում, և ինչու է դա կարեւոր հիմա: Իրականությունը այն է, որ այդ վճռական պահին մենք կարողացանք հաղթել ոչ միայն հերոսաբար կռվելու հաշվին (մինչ այդ էլ հերոսաբար էինք կռվում, բայց ստիպված էինք նահանջել հակառակորդի գերազանցող ուժերի ճնշման տակ), այլ որովհետև կարողացանք մոբիլիզացնել մեր ուժերը, և կազմալուծել հակառակորդին:

Մեր ուժերի մասով այդ կես տարին հսկայական ճեղքման շրջան էր: Մինչ այդ գործող թեթեւազեն կամավորական ջոկատներին եկան լրացնելու Հայաստանի Հանրապետության կանոնավոր զինված ուժերը, նախկին Խորհրդային Միությունից հավաքագրված բարձրորակ սպայական անձնակազմի ղեկավարությամբ: Ռուսաստանի Դաշնությունից սկսեց Հայաստան առաքվել ժամանակակից սպառազինություն, որը արագ չեզոքացրեց հակառակորդի թվային առավելությունը: Հակառակորդի մասով մենք կարողացանք վարպետորեն խաղարկել նրա ներսում թուրքամետ և ռուսամետ բեւեռների միջև հակասությունները, և, չսպասելով այդ հակասությունների լուծմանը, հարձակվողական պատերազմ պարտադրեցինք, որում հակառակորդը, մեկ անգամ կորցնելով նախաձեռնությունը, չկարողացավ այլևս ուշքի գալ: Տառացիորեն մեկ և կես տարի անց մեր գերազանցությունը արդեն այն կարգի էր, որ հակառակորդը 1994 թվականի ձմեռային գործողությունների ընթացքում հազարավոր զոհեր թողնելով ռազմաձայնաստուս, ստիպված էր արդեն ինքը զինադադար խնդրել:

Կարող ենք արդյոք մենք այս ռազմավարությունը կրկնել նոր պայմաններում, և արդյոք ևս մեկ անգամ մենք հնարավորություն ունենք թռիչքային զարգացում իրականացնել: Մեր իրականությունը դրա նախադրյալները տալիս է, թեև դրանք, ինչպես և 1992 թվականի ամռանը, այս պահին բոլորովին ակնհայտ չեն:

Սկսենք մեր ուժերի մոբիլիզացիայից: Եթե 1992 թվականին խնդիրը կանոնավոր և սպառազեն բանակ ստեղծելն էր, այսօր խնդիրը շատ ավելի բարդ է տարադրանակ է, և չի սահմանափակվում բանակով: Այսօրվա պատերազմը մղվում է ոչ այնքան մարտի դաշտում, որքան մարդկանց գիտակցության մեջ, և հակառակորդի հիմնական նպատակը մեզանից յուրաքանչյուրի գիտակցության մեջ հուսալքություն սերմանն է սեփական երկրի նկատմամբ, այդ դեպքում մենք կշարունակենք այն լքել, և մարտի դաշտը կթողենք հակառակորդին առանց կռվի: Ուստի այսօրվա գերխնդիրը ողջ հայկական հասարակության ուժերի մոբիլիզացիան է, երկրում և արտերկրում

220

ստեղծելու ժամանակակից և դինամիկ զարգացող երկիր, որում արտագաղթը կփոխարինվի ներգաղթով արդեն մոտավոր տասնապայյուն:

Պայմանականորեն այս գերխնդիրը կարելի է տարաբաժանել մի քանի մասի ժողովրդավարական և իրավական պետություն, արագ զարգացող և միջազգայնորեն ինտեգրված տնտեսություն, անվտանգ և մարդակենտրոն հասարակություն, բարձր մարտունակ և տեխնոլոգիական բանակ, կրթված և մարտունակ բնակչություն պատրաստ արագ համալրելու զինված ուժերը, և նախաձեռնողական դիվանագիտություն: Կարող ենք քաղաք մենք այս ամենը ունենալ շարունակվող հակամարտության պայմաններում, հիմք ունենալով նաև այսօրվա հակասական իրողությունները:

Ինչպես և 1992 թվականին, հարցի պատասխանը պետք է փնտրել քաղաքական համակարգում: Այն ժամանակվա իշխանությունը, ձեռնարկված հեղափոխական խանդավառության վրա, սակայն լինելով խորապես ոչ կոմպետենտ, հստակ պատկերացում չուներ ազգի իրական ռեսուրսների մասին (մասնավորապես, ռազմական մասնագետների և առկա սպառազինության), և պարզապես չէր պատկերացնում իրավիճակից հնարավոր լուծումները: Այդ իրավիճակը սկսվեց փոխվել միայն Հայաստանի և Արցախի բանակների ղեկավարության մեջ պրոֆեսիոնալների հայտնվելուց հետո: Մերայիս իշխանությունը, որը ձեռավորվել է հիմնականում վայրի կապիտալիզմի արդյունքում, մասամբ էս հստակ պատկերացում չունի ազգի իրական ռեսուրսների մասին, մասամբ էլ խուսափել է մինչ այժմ այն մոբիլիզացնելուց, քանի որ սեփական քաղաքական իշխանության համար իրական վտանգներ է տեսել:

2016 թվականի ցնցումները, սակայն, իշխանությանը կանգնեցրել են երկրնորանքի առջև: Կամ շարունակել նույն քաղաքական ուղեգիծը ի վերջո արտաքին-քաղաքական խոշոր պարտության, և ներքին խորագույն ճգնաժամի հեռանկարով, և կամ փորձել համագործակցության եզրեր գտնել հայկական հասարակության այն ուժերի հետ, որոնք ընդունակ են որակական փոփոխություն սպասելու վերկրում, սակայն դրա դիմաց իշխանությանը իրական մասնակցություն են պահանջում: Այսօր մենք քաղաքական, տնտեսական, և հասարակական դաշտում տեսնում ենք նոր խաղացողների առաջացում, որոնք տիրապետում են որակապես այլ տիպի կարողությունների, քան մինչ այժմ գործող իշխանությունը, և այդ նոր խաղացողների գործունեության արդյունքում, մենք իրական շանս ունենք նոր քաղաքական օրակարգի ձեռնարկման և ամրագրման 2017 թվականի խորհրդարանական ընտրությունների արդյունքում:

Ինչպիսին պետք է լինի այդ քաղաքական օրակարգը, որպեսզի սպասելի երկրի վերընթաց զարգացում, և որքանով իրատեսական է այն՝ առկա արտաքին վտանգների պայմաններում:

Երկրի տնտեսական զարգացումը առաջիկա տարիներին առաջին հերթին

պայմանավորված կլինի տնտեսության հեռանկարային, մասնավորապես, բարձր տեխնոլոգիական ճյուղերում ներդրումային ակտիվությամբ, դա իր հերթին ռեսուրսներ կստեղծի մասցած ոլորտների զարգացման համար: Հայկական հասարակության մեջ, և մեր հանդեպ բարեկամաբար տրամադրված երկրներում այդպիսի ներդրումային ռեսուրսներ կան և կարող են ուղղորդվել Հայաստան, որն, իր հերթին, արդեն ունի բարձր տեխնոլոգիական ընկերությունների արագ զարգացող կորիզ: Որպեսզի այդ ներդրումները Հայաստան գան, անհրաժեշտ է ներդրումային ծրագրերի տնտեսական գրավչության բարձրացում՝ ռիսկերի զուգահեռ նվազեցման պայմաններում: Պահպանվող արտաքին քաղաքական բարձր ռիսկերի առկայությամբ դա նշանակում է հնարավորինս նվազեցնել ներքին ռիսկերը: Այս երկու վեկտորների միակցումը տրամաբանորեն սահմանում է տնտեսական աճի արագացման հիմնական գերակայությունները

ա) Տնտեսական մրցակցության թափանցիկ և հավասար պայմանների ապահովում բոլոր տնտեսավարողներին, անկախ նրանց քաղաքական ազդեցությունից,

բ) Արագացված տնտեսական ինտեգրացում՝ Եվրոպական Միության, Ռուսաստանի Դաշնության, և Մերձավոր Արևելքի բարեկամական երկրների հետ, բարձր տեխնոլոգիաների մասով նաև Միացյալ Նահանգների, Չինաստանի և Հնդկաստանի հետ, տարածաշրջանային տեխնոլոգիական հանգույց դառնալու հեռանկարով,

գ) Բյուջեի եկամուտների հավաքագրման բարձրացում երկրում առկա հարստությունը համարժեք հարկելու հաշվին, արտաքին պարտքի մակարդակի կայունացում և աստիճանական նվազեցում,

դ) Պետական ծախսերի օպտիմալացում և գերակայությունների վերակողմարդում կրթության և պաշտպանական ոլորտի վրա, տարածաշրջանում գիտա-կրթական գերազանցության կենտրոնի ձեռնարկում, բանակի տեխնոլոգիական վերազինում և ռազմարդյունաբերության զարգացում,

ե) Կանանց մասնագիտական ակտիվության և ներգրավվածության բարձրացում գործունեության բոլոր ոլորտներում, ներառյալ նաև պաշտպանական ոլորտում, երկրում առկա մարդկային ռեսուրսների առավելագույն օգտագործման նպատակով,

զ) Անկախ և որակյալ դատարարական համակարգի ձեռնարկում, ներդրողների և քաղաքացիների իրավական պաշտպանվածության ապահովում,

է) Հայրենադարձության աջակցում՝ որպես երկիր կապիտալի և կարողությունների ներգրավում, և արտերկրի հայության հետ իրական ինտեգրացման միջոց:

Այս ամենը միասին իրականացնելը դժվար խնդիր է, բայց ոչ անհնարին: Այն պահանջում է կառավարման որակապես նորացված համակարգ, որը բնորոշ է և մոտիվացված աշխատելու ձեռնարկված խնդիրների ուղղությամբ: Այսօր մենք այդպիսի կառավարման համակարգ դեռևս չենք ձեռնարկել, առկա համակարգը ծանրաշարժ է, անհամաչափ բաշխված կարողություններով, բազմաթիվ կոռուպցիոն ռիսկերով, սերտաձած օլիգարխի վերնախավի հետ: Առողջ և արդյունավետ կառավարման համակարգը երկիրը կարող է

արագ զարգացման ճանապարհով տանել նույնիսկ պատերազմական պայմաններում, իսկ բարոյալքված և կոռուպցիոն համակարգը նույնիսկ խաղաղ երկիրը վաղ թե ուշ կբերի քաղաքացիական պատերազմ: Ուստի ցանկացած առաջընթաց պահանջում է առաջին հերթին սկսել պետության կառավարման համակարգի բարեփոխումներից, այստեղ է մեր բոլոր խնդիրների բանալին, այստեղ է որոշվում վաղվա օրը: Այսօր գոյություն ունի դրա պատմական հնարավորությունը, երկիրն ունի բազմաթիվ երիտասարդ և կարող մասնագետներ, որոնք պատրաստ են լծվել պետության արդիականացման գործին, համապատասխան քաղաքական առաջնորդության ներքո: Այս առաջնորդությունը մենք կարող ենք ապահովել բոլորս միասին, թոթափելով հոռետեսությունը, և առաջիկա ընտրությունների միջոցով ձեռնարկելով այն իշխանությունը, որին մենք պատրաստ կլինենք վստահել:

Եթե մենք կարողանանք լուծել մեր երկրի կառավարման համակարգը արդիականացնելու և օլիգարխիայից տարանջատելու խնդիրը, ապա կկարողանանք արագացնել երկրի զարգացման տեմպերը, ինչպես դա տեղի ունեցավ մեր հարեւան Կրաստանում: Թեև չլուծված հակամարտության առկայությունը ավելացնում է երկրի ռիսկայնությունը, ներդրումների ներգրավված տեսանկյունից դա ընդամենը մի գործոն է, որը կարող է հավասարակշռվել այլ, վերը նշված գործոններով, դրա վրան կանգնված հակամարտության վտանգ ունեցող այլ երկրների (ինչպիսին են Իսրայելը, Հարավային Կորեան, Թայվանը, և նույն Կրաստանը) արագընթաց զարգացում: Այս դեպքում արդեն կայուն խաղաղության ուղղված հաջորդ քայլը կդառնա մեր զինված ուժերի արմատական վերափոխումը, որոնք հնարավորություն կտա կտրուկ բարձրացնել դրանց կրակային հզորությունը և չեզոքացնել հակառակորդի ցանկացած առավելություն մարտի դաշտում գուգահեռաբար բարձրացնելով մեր զինծառայողների անվտանգությունը: Այս մասին կարելի է խոսել առանձին, սակայն աշխարհի առաջատար բանակների փորձը ցույց է տալիս, որ մենք դեռ բանակի մարտունակության և կրակային հզորության բարձրացման հսկայական պոտենցիալ ունենք, որի իրականացումը հնարավոր է համարժեք միջոցների ներդրման և արդյունավետ կառավարման պայմաններում:

Երկու խոսք նաև մեր հակառակորդի մասին: Մենք, չպետք է նրան թերագնահատենք, սակայն և գերագնահատել պետք չէ: Սպրիդին հակառակորդի ձեռք բերած հարաբերական հաջողությունները մարտի դաշտում պայմանավորված էին հիմնականում անակնկալ գործնով և ներմուծված թանկարժեք բարձր տեխնոլոգիական սպառազինության օգտագործմամբ: Նույնիսկ այդ պայմաններում հակառակորդը եռակի մեծ մարտական կորուստներ կրեց, մեր զինվորները և հրամանատարները բաց մարտում գերազանցեցին հակառակորդին: Անակնկալ գործոնը այժմ արդեն նվազել է, իսկ տեխնոլոգիական առավելությունները կարելի է

230

մի քանի տարում չեզոքացնել՝ մեր կողմից համապատասխան ներդրումների դեպքում: Երկարաժամկետ հեռանկարում, սակայն, մեր նպատակը պետք է լինի ոչ թե պարզապես վերականգնել ուժերի հավասարակշռությունը, այլ օգտվել հակառակորդի ներքին թուլությունից, եւ կազմալուծել նրա կառավարման համակարգը, ինչպես դա տեղի ունեցավ 1993 թվականին: Մենք, բնականաբար, մինչեւ վերջ չենք կարող ազդել հակառակորդի ներքին զարգացումների վրա: Սակայն պետք է ուշադիր հետեւենք այդ զարգացումներին, եւ ձգտենք օգտվել մեր համար բարենպաստ միտումներից: Այդպիսի միտումները մի քանիսն են, եւ 2016 թվականի ընթացքում նրանք սկսել են հստակ ուրվագծվել:

ա) Ադրբեջանը անցել է իր տնտեսական հնարավորությունների բարձրակետը, երբ այն կարող էր մեզինից տասնապատիկ բարձր բյուջետային եկամուտներ ունենալ, եւ անարգել ներդրել սպառազինությունների մեջ (2017 թ. նախատեսված պետական բյուջեն զիջում է 2013-ին դուրախին արտահայտությամբ 2,5 անգամ): Անցած տարին աչքի ընկավ ոչ միայն այս երկրում տնտեսական անկմամբ, այլեւ խորացող ֆինանսական ճգնաժամով, մանաթը մեկ տարում արժեզրկվեց մոտ 75%-ով, սպարեզ վերադարձավ արտարժույթի սեւ շուկան, բանկային համակարգը հսկայական կորուստներ արձանագրեց, գործազրկությունը աճում է արագ տեմպերով: Այս ամենը խոսում է ներքին խորացող անվտանգության եւ զարգացման ընտրած մոդելի փակուղու մասին, եւ թե՛ նավթի գնեքը նորից հրաշքով չբարձրանան նախկին մակարդակին, տնտեսական ճգնաժամը ավելի խորանալու միտում ունի:

բ) Ադրբեջանի դեկավարությունը կարողացավ առավելագույն գովազդային արդյունք ստանալ ապրիլյան գործողություններից, մասամբ նաեւ մեր իշխանությունների անհաջող եւ իրարամերձ հայտարարությունների արդյունքում, եւ դա ստեղծեց հասարակական ակնկալիքների բարձր մակարդակ այդ երկրում: Սակայն այս ակնկալիքները չեն նյութականանում, եւ սա հիասթափության նոր պլիք է ծնում: Այս

իմաստով, պատահական չէր Չինարի գյուղի մոտ տեղի ունեցած արկածախնդրությունը, եւ դրա լուրջան մատնումը չստանալով իր ցանկացած գովազդային արդյունքը, հակառակորդի լրատվական մեքենան ստիպված էր կոծկել այն: Հակառակորդի հետագա գործողությունները շատ բանով պայմանավորված են լինելու նույն գովազդային տրամաբանությամբ, եւ թե՛ մենք կարողանանք ձախողել այս ռազմական սաղորանքները, ապա կոնենք նրան դրանց շարունակելու նպատակահարմարության եւ երկրում դեմքը կորցնելու ծանր երկրնտրանքի առաջ:

գ) Ադրբեջանը արեւելյան տիպի ավտորիտար միապետություն է: Այսպիսի համակարգերը արտաքուստ կայուն են, երբ ունեն ուժեղ միապետ, սակայն միապետի ուժի խարխիվելու դեպքում միտում ունեն անկառավարելի քաոսի վերածվելու, դրա օրինակները մենք տեսել ենք Լիբիայում եւ Սիրիայում: Այսօր դեռ վաղ է խոսել Ադրբեջանում մեծամասշտաբ անկայունացման մասին, սակայն դրա խորքային միտումները եւս ուրվագծվում են մեկ տարի առաջ երկրի միապետ-նախագահը ստիպված եղավ կազմալուծել Ազգային անվտանգության ծառայությունը՝ իր իշխանությանը սպառնացող վտանգների պատճառով, իսկ առաջադրեն կես տարի առաջ փոխել սահմանադրությունը, իշխանության ժառանգական անցումը դուրացնելու նպատակով: Որեւէ երաշխիք չկա, որ այդ անցումը հնարավոր կլինի իրականացնել անցնում, կոշտ ավտորիտար կառավարումը ծնում է խոր հակասություններ նաեւ վերնախավի ներսում, որոնք վաղ թե ուշ կարող են պայթել:

դ) Ադրբեջանը, ի տարբերություն մեզ, իսլամական ֆունդամենտալիզմի թիրախ է դառնում: Ունենալով հիմնականում աշխարհիկ եւ շահամոլ վարչակարգ եւ անկիրթ եւ ընչազուրկ բնակչության հոծ զանգված, այն աստիճանաբար տրամադրում է իր դեմ այդ տարրերին երկրի ներսում: 2016 թվականին Նարդարան ավանում տեղի ունեցած իսլամիստների խժոժությունը հիշեցում էր նրա մասին, որ ջինն արդեն 22ից դուրս է եկել, եւ իշխանությունները երկրի ներսում նոր ճակատ են ստացել, տարվա ընթացքում պարբերաբար տեղի ունեցող փոքր մասշ-

տաբի բախումներն էլ ցույց են տալիս, որ Նարդարանի ճնշմամբ հարցը չի փակվել: Ե) Եվ վերջապես, Ադրբեջանի հիմնական աշխարհաքաղաքական հովանավորը, Թուրքիան, ծանր օրեր է ապրում: Այն ավելի է ավելի է թաղվում ներքաղաքական խորը ճգնաժամի մեջ, որն արդեն վերածվել է փաստացի քաղաքացիական պատերազմի, դարձել է բազմատեսակ սահաբեկիչների թիրախ, եւ մեկուսացել է ավանդական Արեւմտյան դաշնակիցներից: Թուրքիան, որը մեծ եռանդով աջակցեց Ադրբեջանին ապրիլին, այսօր արդեն ստիպված է շատ ավելի շրջահայաց լինել իր սահմաններին հակամարտության եւս մեկ օջախ չստանալու համար:

Իհարկե, այսօր դեռ վաղ է պնդել, որ Ադրբեջանում ընթացող իրադարձությունները արագ կկազմալուծեն այդ երկրի իշխանությունը, ինչպես դա տեղի ունեցավ 1993 թվականին: Սակայն արդեն հիմա Ադրբեջանի իշխանությունը, բազմաթիվ չափումներով, ավելի թույլ է, քան տառացիորեն մեկ տարի առաջ, երբ այն սկսում էր ապրիլյան արկածախնդրությունը, եւ նրա գործողությունների ազատության աստիճանը նվազել է: Հակառակորդին հեշտ չի լինելու շրջել ժամանակի անիվը, եւ վերադարձնել նավթային բուսի տարիները, իսկ կուսակազմը հակամարտությունների ինտեգրան շարունակելու է նոր մարտահրավերներ բերել նրա առաջ:

Այս պայմաններում մեզ պետք է կենտրոնանալ մեր ներքին խնդիրների արմատական լուծումների վրա, եւ պատասխատվել այն պահին, երբ հակառակորդի ավտորիտար համակարգի ներքին ապակայունացումը մեր առջեւ ճանապարհ բացի նախաձեռնողական ռազմավարության վճռական քայլերի համար: Մեզ պետք չէ կառչել այսօրվա ստատուս, քվոյից, այլ հետեւողակալորեն գործել բարենպաստ պահերին այն մեր օգտին փոխելու նպատակով: Այս պատերազմը կավարտվի, երբ ոչ թե մենք, այլ հակառակորդը կանգնի Արցախից շատ ավելին կորցնելու իրական վտանգի առջեւ, եւ ստիպված լինի հաշտվել մեր գերակա ուժի հետ:


Ավետիք ՉԱԼԱԲՅԱՆ,  
«Արար» հիմնադրամի հոդվածի նախագահ

## Հայի ոգին, նպատակը եւ մարգարեությունը Սուրբ քաղաք Երուսաղեմում

Հրեա պրոֆեսոր Բորիս Մոյշեսոն Կոլամբիա համալսարանից 2001 թվականին հրապարակել է գիրք հին հայերի մասին: Այդ գրքում նա նշում է, որ հայերը գտնվում են աշխարհի ամենահին քաղաքակրթության էպիկենտրոնում: Նա իր գրառումներում ավելացրել է նաեւ, որ Բիբլիական Իսրայելը ծնունդ է առել հայ ծագում ունեցող խմբավորումներից:

Հին քաղաք Երուսաղեմը բաժանված է չորս մասերի, որոնցից են քրիստոնեական, մահադեական, հրեական եւ հայկական հողատարածքները:

Հայր աշխարհի միակ ազգն է, որը տիրապետում է հին Երուսաղեմ քաղաքի մեկ քարոքին: Նույնիսկ Դավթի աշտարակը գտնվում է հայկական տարածաշրջանում: Մա է պատճառը, որ պրոֆեսոր Մոյշեսոն իր գրքում նշել է հայ ազգին որպես այդ տարածաշրջանի առաջին քաղաքակրթություն:



# ԱՐԱՐԶԻ ՊԱՅՏՎԱԾ ՀՈՒՆԴԸ՝ ՀԱՅԸ

## Պատմվածք նրանց համար, ովքեր հետաքրքրվում են հայի ճակատագրով

Հողվածի վերնագիրը Գրեգորի մտքում ծընվեց ինքնաբերաբար. «Թուրքիայի փոխվող դեմքը»: Վերջին այցից հետո այդ երկրում կատարվածն առանց երկբայության կարելի է որակել նաև հեղաբեկում: Դա Հրանտ Դինքի կյանքն արժեցավ, բայց լրագրողը համոզված է, որ եթե նա հանդերձյալ կյանքում դա իմանա անսահման երջանիկ կզգա: Թեև ավելի ճիշտ կլինի հողվածը վերնագրել «Հայերի վերականգնվող դեմքը», քանի որ Թուրքիան փոխվում է հենց դրա շնորհիվ ցեղասպանությունից փրկված այն տարրի վերահայացմամբ, որն իրերի բերումով հայրենագուրկ չի դարձել, այլ մնացել է բնօրրանում ու ծափվել: «Բոլորս Հրանտ Դինք ենք» շարժումից հետո նրանցից շատերը պատում են կեղծ ուրացման քողն ու հայտարարում իրենց հայ լինելու մասին:

Գարնանը հողն ինչպե՞ս է արթնանում: Իհարկե, արևն է նրան կյանքի կոչում, բայց եթե չլինի հողի ներսում ամբարված հունդը՝ ծիլն ինչպե՞ս է պիտի արմատակալի ու հողի երես դուրս գա: Հայն Արևմտյան Հայաստանի հողում Արարչի պահ տված հունդն է, ինչ էլ պատահի՝ պիտի ծլարձակի: Պիտի փթթի, պիտի պտուղ տա:

Թեև այս մտքերը Գրեգորին երբեք չեն լքում՝ վերստին պաշարեցին բացօթյա սրճարանի անկյունի սեղանի մոտ հարմար տեղավորվելուց հետո: Սրտապարար երաժշտությունն էր նրան հեռվից գրավել ու բերել հասցրել այդ լճափնյա հանգստավայրը: Դիարբեքիում էր կապույտ դեգերուժներից հետո հոգին խաղաղության կարոտել էր ինչպես պապակի հողն անձրևին:

Գործնուրժմա ավելի հաջող է անցել, քան կերպեր, այնպես որ ու հանգստի իրավունք էր վաստակել, և Վանում 2 լրացուցիչ օր մնալու պատեհություն:

– Արտոնն ի՞նչ կկամենա, – լսեց մատուցողի շողորճային ձայնը:

Նա խոնարհվելով Գրեգորին մեկնեց գունագարդ կերակրացանկը ու լայնաշորթ ժպտաց: Թուրքի ձայնը, այդ, թմանքի սովորական չափաբաժին էր պարունակում, բայց մի լրացուցիչ երանգ ուներ, որն օտարերկրյա լրագրողին ստիպեց նրա դեմքին արագ հայացք գցել: Երկին դեմ առավ վերջին օրերին իրեն հալածող եզրակացությանը այդպիսի արտաքին կարող է ունենալ թե թուրքը, թե հայը: Օպտալ հայերին տարբերելն առհասարակ անհնար է: Բայց որպեսզի եվրոպական քաղաքացիությունն արդարացներ նրա մայրենի լեզվով սիրալիր հարցրեց.

– Անուդդ ի՞նչ է:

– Անունս Վանա տառեխ է, – լուրջ-լուրջ պատասխանեց մատուցողը: – Բերե՛ս մի:

– Արայժմ սառը թան բեր ու նվազամբին ասա՝ թուրքական մեղմ մեղեղի նվազեն: Բայց տես հունական կամ արաբական չլինի ուզում եմ մաքուր թուրքական երաժշտություն լսել: Ոչ էլ մուղամ:

– Գլխիս վրա, – շեղակի ծայտով խոնարհվեց և թուրքը, և հայ մատուցողն ու անհետացավ սրճարանի քարե տաղավարում:

Որոշ ժամանակ անց բեմից լսվեց «Մարի գլայի՛նը»: Բավականին վարպետորեն մշակված տարբերակ էր, մանավանդ կիթառահարը նվագում էր մեծ ներշնչանքով, երևում էր, որ մասնագիտական կրթություն ստացած

երաժիշտ է: Դժվար էր դա կոմիտասյան կատարում համարել, այդուհանդերձ երաժիշտները մի ջերմությամբ էին նվագում, ասես սեփական հոգին էին աճուրդի հանել: Այդ բավականությունը երևի առնվազն կես ժամ տևեց: Գրեգորը մատուցողին գլխի շարժումով հասկացրեց, որպեսզի մոտենա: Ուզում էր նվագի համար անմիջապես վճարել: Եվ թուրքը, և հայ մատուցողը հեռվից ծպտաց ու չմոտեցավ:

Նվագախումբն սկսեց մի նոր մեղեղի կատարել: Կոմիտասի, Եկմայանի ու հայկական ժողովրդական անմշակ երգերի տարօրինակ խառնուրդ էր, այնքան հարազատ ու սրտաճմով, որ Գրեգորը հայացքն ականա հառեց ոգևորությունից զմայլանքի մեջ ընկած երաժիշտներին: Կիթառահարի դիմագծերը նրան շանթահարեցին: Դա իսկ և իսկ իր հոր հորեղբոր ծոռ Միսաքի դեմքն էր: Սյն հորեղբոր, որ Տերգորի ջարդերից փրկվելուց հետո չէր ցանկացել Կահիրեն լքել, մնացել էր այնտեղ, որպեսզի տոհմի խոսակցներին իր շուրջը հավաքեր: Հորեղբորը հաջողվել էր Մանուկյան գերդաստանից մի քանի մանչ գտնել, մեծացնել, գործի տեղ դրանք ու մանկանից առաջ հոգին հանգիստ էր եղել, միայն հոգեվարքի ժամանակ ասել էր, որ իր կրտսեր եղբայր Վարուժանը չի գոհվել, այլ ընկել է Ջեմալի որբանոցը: Նաև հասցրել է շննջալ, որ այդ լուրը գաղտնի է պահել եղբոր ապահովության համար: Իսկ թե հետո Վարուժանը կյանքի ինչ գալարներով է անցել ոչ մեկին հայտնի չէր:

Հետաքրքիր էր նաև այն գուգաղիպությունը, որ Միսաքը ևս երաժիշտ է, Եգիպտոսում հայտնի նվագախումբ է ղեկավարում: Բայց նա կիթառից բացի նվագում է նաև փողային ու ստեղնային նվագարաններ, սազ ու քամանչա: Մտքում համեմատությունը չէր վերջացրել տեսավ, թե Միսաքին նման թուրքն ինչպես կիթառը ճարպիկ շարժումով փոխանցեց գործընկերոջն ու սկսեց դուդուկ նվագել, իսկ մի քանի րոպե անց դաշնամուր:

Թուրք... Գրեգորը բարձրաձայն սնծիծառեց. Օպտալ հայերի մասին հավաքած վիթխարի նյութը նրա մեջ կասկած չթողեց, որ ոչ երաժիշտը, ոչ էլ սրճարանի մյուս աշխատողները թուրք չեն, այլ գտարյուն հայ: Համոզվելու համար հեռախոսը հանեց, բացեց ընտանեկան արբանյակը:

Միսաքի ու քիչ հեռվում հայկական երաժշտությունը Վանա ծովակով մեկ սփռող ջահելի միջև ոչ մի տարբերություն չնկատեց: Մտածեց. «Եթե հենց հիմա գնամ ու նրա վերնաշապիկի փակ օձիքը բացեմ կտեսնեմ ճիշտ իմ խաչի նման խաչ»:

Համերգը շարունակվեց ևս ժամուկես: Մատուցողն ինչ-որ անբացատրելի համառությունով չէր մոտենում: Ի վերջո Գրեգորը գնաց նրան փնտրելու: Երբ բավականին սրտնեղած վերադարձավ սեղանի մոտ տեսավ իրեն վիթխարի երաժիշտին: Երկիմաստ ծպտում էր, հասցրել էր հագուստը փոխել ու վկացվել:

Բարևելու փոխարեն Գրեգորը լուռ նստեց ու սպասեց հերթական խոստովանությանը: Օպտալ հայերի հետքերով քայլելու բոլոր տարիներին ընթացքում դա երևի առնվազն 300 000-րդը կլինի:

– Մենք ծանոթ ենք, – շեղակի ծպտաց երաժիշտը:

– Նկատի ունե՞ք մեր գե՛նը, – ակնոցը հանելով՝ պարզորեն հարցրեց Գրեգորը: Երևի առաջին անգամ էր, որ գրպանում ձայնագրիչի կոճակը չսեղանեց:

– Երեք տարի առաջ դու Չենգիլայում չէի՞ր: Աչքերում մանկական կրակներ բոցկլտացին, բջիջ առ բջիջ տարածվեցին հայկական դիմագծերով մեկ: Մրբատաշ քիթ ու ծնոտ, խորքնկա խոշոր աչքեր, բաց մաշկ, արդեն ճերմակող թխամազ գանգուրներ:

Չենգիլա... Դե՛ իհարկե, ուրիշ որտեղի՞ հունդից կարող էին երկու այդքան նման արարածներ ընձյուղվել: Ահաև թուրքական որբանոցում անհետացած Վարուժանի գարմը: Բուրսայում էր նրանց փնտրում՝ Վանում գտավ:

– Ես էլ քեզ համար անակնկալ ունեմ, – ասաց Գրեգորն ու հեռախոսը բացեց:

– Շնորհակալ եմ, – ձեռքը կրծքին դրեց երաժիշտը: Նա հեռախոսում իրեն տեսավ ոգևորության զագաթնակետին և զուտ արվեստագետի հրճվածք սպրեց:

– Ինչի՞ համար ես շնորհակալ, Միսաք:

– Իմ անունը Մուրադ է, Միսաք չէ...

– Բայց նկարում Միսաքն է, հորս հորեղբոր ծոռը: Կահիրեում է ապրում, դեռ ոչ մի անգամ հայրենիքում չի եղել:

– Ի՛նչ է դուրս գալիս, – տարակուսեց Մուրադը: – Ես գիտեմ, որ դու ծպտյալ հայեր ես փնտրում: Մպասում էի, որ մի օր մեր ընտանիք էլ կգաս: Իսկ սա...

– Օպտալ հայերի մեջ բացահայտ արյունակիցները շատ-շատ են, եղբայրս:

Հայոց մեջ հիմա մի այնպիսի բառ չկա, որ «եղբայր» բառի չափ տարածում ունենա: Մական Մուրադն անսասելի հուզվեց, աչքերը մշուշվեցին: Լցված սրտով առաջարկեց լճափին գրասենյակ:

Աղջամուղջը պարուրել էր Վանա ծովակն ու շրջակայքը: Ալիքների կամացուկ շառաչը նմանվում էր հեռուներում հնչող մեղմիկ նվագի:

Երկու տղամարդիկ լուռ ունկնդրում էին այդ նվագն ու զգում իրենց ներսում ծփացող հարազատության ծարձակումը:

Քիչ հետո նրանց մոտեցավ մի բավականին շքեղ մեքենա: Վարորդը սրճարանի մատուցողն էր, նա, ով իրեն անվանել էր Վանա տառեխ: Կողքին նստած էր իսկական եվրոպացու արտաքինով և նրան շատ նման մեկ այլ տղամարդ, և Գրեգորն անմիջապես հասկացավ, որ երեքն էլ նույն միս ու արյունն են:

Հանդիպումը ծանոթություն համարելը շատ դժվար է, եղբայրների հետ ողջագուրվելիս Գրեգորի մտքում զովեց դրա ճիշտ բնորոշումը՝ Վանա ծովակի ալիքի վերահարձակ Կոնյուկը: Ու րպեսզի անհետանա ալիքը, եթե ոչ դառնա հարազատ ափին: Եղբայրների համար հանդիպումն այլ խորհուրդ ուներ՝ նրանք երբեք չեն իմացել, որ իրենց ընտանիքից ուրիշ փրկվողներ են եղել, անկեղծորեն խոստովանեցին, որ չեն էլ փնտրել: Թուրքիայում հայ լինելը միշտ էլ մահացու հանցանք ու վտանգ է եղել, միայն Դինքի սպանությունից հետո այդ երկրում երկաթե վարագույրն ընկավ ու սկսեցին հայերի մասին խոսել: Անգամ համարձակներ կան, ովքեր ասում են, թե 15-ին կատարվածը ցեղասպանությունն է:

250

Ումանք ավելի հեռուն են գնացել՝ խոսում են հատուցման, բնիկների վերադարձի մասին:

Եղբայրները երջանակությունից իրար հերթ չէին տալիս Գրեգորին անհամար հարցեր էին ուղղում ու սրտատրոփ պատասխանի սպասում: Լճափին մարդիկ չկային, միայն լիճն էր՝ իր հուրհրատող կապույտով, այդ պատճառով չորս տղամարդկանց ձայները մրցում էին ալիքների աղմուկի հետ:

– Գնում ենք մեր տուն, – հայավարի հրամայեց երամիշտ եղբայրը:

Երեկոն շարունակվեց, ապա անվերջանալի գիշեր դարձավ նրանց հարկի տակ:

Երեք եղբայրներով ապրում էին եռահարկ առանձնատանը: Նախասրահի դիմացի պատին պատկերված էր ոսկեձեռնակ հսկա բռնժ, ըստ երևույթի գերդաստանի զինանշանը: Արտաքուստ դա մի պարզ նկար էր, սակայն ուշադիր նայելիս բռնժն սկսում էր բացվել, տարածվել ու ցուցադրել ներսի պարունակությունը, ոչ այն է տոնածառ, ոչ այն է լեռներում ցրված աստղեր: Գրեգորը հիշեց, որ բռնժի նույն ուրվագիծը տեսել է նաև սրճարանի ցուցանակին: Բհարկե, օտար մեկը չէր կռահի, որ դա զինանշան է, իսկ իրականում՝ գերդաստանի հարատևության խորհուրդը: Լավ էին մտածել, խոսք չկա: Հայաբար էին մտածել:

Տունը լիքն էր մեծ ու փոքր երեխաներով, ահեղ-ջահեղ կանանցով, իսկ վարի հարկում մի առանձին բաժին հատկացված էր 108-ամյա Վարուժան պապին: Ամեն ինչ հայկական էր, հայաբույր ու հայասնա, բացի լեզվից, որը նրանք բնագոյաբար թե գիտակցաբար դարձրել էին իրենց մարմնական գոյության պայմանը:

Խոսքուզրույցի կորիզը դարձավ գերդաստանի պատմությունն ամբողջացնելը: Գրեգորն արդեն չէր կարող ձայնագրիչը չլինացնել, գգում էր, որ Եվրոպայում 108-ամյա Վարուժան պապի ձայնագրությունն իսկական պայթյուն է առաջացնելու: Բացի նրանից, որ իր ընտանիքին մեծ անակնկալ է անելու՝ նաև մասնագիտական ոլորտում է նոր ակոս բացելու: Այո, Հրանտի «Ակոսը» պետք է ամբողջ մոլորակն ակոսի: Չուր չէ, որ ինքը 21 տարի ղեկավարում է «Մարդկություն» ամսագրի Թուրքիայի բաժինը, բայց սա ավելին է լինելու, քան սովորական հրապարակումը:

– Վարուժան պապ, դու հիշո՞ւմ ես ձեր ընտանիքի անդամներին, Մանուկյանները քանի՞ եղբայր էին, մեզ այդ մասին կպատմե՞ս, – հարցրեց Գրեգորն ու միացրեց տեխնիկայի այն բոլոր միջոցները, որոնց առանց զլանալու հետը քարշ է տալիս գործուղման բոլոր վայրերով:

Պապը դիմախաղով հասկացնել տվեց, որ ամբողջ կյանքում դա է փափագել իր տոհմի պատմությունը տան պատերից դուրս գա, աշխարհին տեղեկացնի, թե ինչ են նշանակում թուրք ու թուրքական տերություն:

– Սպասիր, Գրեգոր, – հյուրին, իսկ ավելի ճիշտ նորահայտ հարազատին հետ պահեց եղբայրների հայրը՝ Դուրանը, – նախ նրան ասե՛ք, որ իր ընտանիքից երկուսը ևս փրկվել են ու իրենց օջախներն ստեղծել:

– Այս տարիքում նա դրան չի դիմանա, – առարկեց տղաների մայրը, որ հայկական բնիկ դիմագծերով ալեհեր տիկին էր:

– Կոլիանա, նա ինչերի չի դիմացել, – հակաձառեց երամիշտ ծոռը: – Գիտե՞ս, պապ, այս ամբողջ քո հարազատն է, քո եղբայր Տիգրանի շատավիղը: Իսկ մյուս եղբայրը՝ Վահրանը, Կահիրեում է ապրել: Նրանք հիմա չկան,

բայց իրենց բոլոր շատավիղները ողջ առողջ են ու մեզ նման չեն, իսկական հայ են:

– Մենք էլ ենք իսկական հայ, – ծերունական աչքերը ձեռքի հսկա թաշկինակով արբեց Վարուժան պապը: – Եթե կուզենաս իմանալ մենք ավելի հայ ենք, քանի որ մեր երկրից ոչ մի տեղ չենք գնացել: Մեր լեզուն, մեր հավատքն ենք մի քիչ ուրացել, բայց դրանք կշտկվեն, կարևորն այն է, որ մենք մեր պապերի հողին բազմացել ու շենացել ենք:

– Վարուժան պապը ճիշտ է, – գոչեց Միսաք 2-րդը, – ու ես որոշում կայացրի:

– Ի՞նչ որոշում, – խոժոռվեց ավագ եղբայրը՝ ընտանիքի ամենազուշավորը: – Երկու օր հետո դու դարակազմիկ համերգ ունես, ամբողջ Վանը քո ելույթին է սպասում, երեխայական արկածներից հեռու մաս: Եթե համերգը ձախողվի Մտամբուլից քեզ այլևս չեն հրավիրի:

– Կիրավիրեն, եղբայրս, – Գրեգորին աչքով անելով նրա բառը կրկնեց երամիշտը: – Ու դեռ շնորհակալություն կհայտնեն:

Գրեգորը ձայնագրիչները միացրած էր թողել, նրա համար այդ հարկի տակ հնչող յուրաքանչյուր բառ գանձ էր:

Ի վերջո պապն իր ծերունական լալկան ձայնով սկսեց պատմել: Գրեգորը թե լսում էր, թե լսածը մտքում իմացածի հետ համեմատում:

... Չենգիլա գյուղը Բուրսա նահանգի ամենահարուստ, զարգացած բնակավայրերից է եղել: Բնակչությունը բացառապես հայկական, շուրջ 7500 մարդ: Մետաքսագործական չորս գործարան են ունեցել, բազմաթիվ աշխատանոցներ, լուսավորչական եկեղեցի /Էջմիածնի տաճարից պակաս չէր/, մշակութային կենտրոն ու հոյակապ դպրոց: Դպրոցի նոր շենք կառուցելու համար հայերն ստիպված են եղել խորամանկել ձևացրել են, թե հերթական շերամարտնարանն են կառուցում, այնինչ շինարարությունն ավարտելուց հետո այն տրամադրել են դպրոցին: Շենքն ունեցել է ընդարձակ դասասենյակներ, մարզասրահ, համերգային դահլիճ, թատերաբեմ, անգամ մանկապարտեզ: Գյուղի բոլոր տները քարաշեն էին, եռահարկ: Դա զուտ տնտեսական հիմնավորում է ունեցել շերաքս ավելի լավ է բազմացել վերևի հարկերում մաքուր օդում: Իսկ հայերն իրենք ապրել են վարի հարկում: Շատերը հաջողությամբ զբաղվել են խաղողագործությամբ, շատերն էլ խաշնարածությամբ: Գյուղն անգամ ֆուտբոլի դաշտ է ունեցել:

Այնպես որ թուրքական կառավարությունը գյուղիցառատ բարիքներ է կլանել: 15թվականից առաջ կառավարության վերաբերմունքը փոխվել է, սկսել են հայաբնակ գյուղն իրենց «հետաքրքրությունների ծիրում պահել»: Իսկ դա նշանակում է բնությունների, անարդարության, թալանի շարան: Բուն 15-ին չենգիլացիներին բաժին է ընկել ամբողջ Արևմտյան Հայաստանի հայության արյունոտ ճակատագիրը: Նախ տղամարդկանց բանակ գորակոչելու անվան տակ հավաքել են ու տարել, ապա մի ասրասփազոտ օր մայր ու մանուկ, ծեր ու հիվանդ քշվել են ասքորի: Կիսամերկ, վիրավոր, քաղցած գաղթականների քարավանները ձգվել են դեպի Կոնյա, ապա Տերգոր:

Վարուժանի աչքի առաջ սրակոտոր են արել ամենամեծ եղբորը, մորը, հորն ու երեք քույրերին: Գաղթի անավոր ճանապարհին մյուս հարագատների կողքեր էլ ու երբեք չի հավատացել, թե այդ դժոխքից որևէ մեկը կարող էր փրկվել: Իր ողջ մտալը համարում է հրաշքների հրաշք:

– Պապ, փրկվելուց հետո ինչպե՞ս հետ գնացիր Չենգիլա: Ինչպե՞ս կարողացար ծպտվել, – հարցրեց Գրեգորը:

Մրահում լարված լուրջությամբ տիրեց: Ներկա չափահասներից յուրաքանչյուրը պատմությունն անգիր գիտեր, բայց առաջին անգամ այն պետք է լսեր նաև դրսից եկած մարդը: Այսինքն ինչ դուրս տոհմի արյունակիցը: Բոլորը նույնը մտածեցին ու Գրեգորին ծպտացին ամենաիսկական մանուկյանական կիսաշեղ ծպիտով: Շեղության հանելուկն էլ բացահայտվեց դա ընդհանուր գաղտնիքի շղարշն էր:

– Ձեռնալի որբանոցում երագիս մեջ հայերեն էի խոսել: Հայերեն խոսելը մահացու մեղք էր, մենք պետք է մեր ազգն ու արմատները մոռանայինք, պետք է թուրք դառնայինք:

– Որպեսզի թուրքի անապատային վայրի արյունն ազնվացնենք, – քնծիծաղեց Գրեգորը: Թուրքիայում մասցած հայերը, այդ թվում Մանուկյանները շատ փաստերի իրազեկ չէին, իսկ Եվրոպայում ապրող լրագրողը շատ լավ գիտեր, թե ցեղասպանության ոճրագործներից Ձեռնալ կոչվածն ինչու էր կայսրության արյունոտ տարածքներն ընկած հայ որբեր փնտրում, ինչու էր նրանց համար որբանոց բացել, հետո էլ նրանց բաժանել թուրք ընտանիքներին:

– Ես հասկացա, որ նրանք մի օր ինձ ծեծամահ կանեն, – կերկեր ձայնով, արցունքակալած աչքերը ստեպ-ստեպ սրբելով շարունակեց Վարուժան պապը: – Մի գիշեր ես փախա, բախտս բերեց մոտակա գյուղում ապրող մի խաշնարած քուրդ ինձ գտավ ու իր տան ծառան դարձրեց: Նա շատ երեխաներ ուներ, իմ ավելանալը հարևանները չնկատեցին: Բայց նա խնդրեց, որ ես հայերեն իսպառ մոռանամ, քրդերեն ու թուրքերեն խոսեմ: Երկու տարի քրդի տանն աշխատեցի: Մի օր նրան պատմեցի, որ ծնողներիս տանը թաքցրած գանձ կա, դրա մասին միայն հայրս ու պապս գիտեին, մեկ էլ ես, քանի որ նրանց խոսակցությունը պատահաբար լսել էի: Քուրդը պահանջեց, որ դրա մասին ոչ մի ծպտուն չհանեմ, անգամ իր որդիներին չպատմեմ:

Պապը հոգնած լռեց, հիշողությունների ծանրությունից ձայնը մարեց: Ալեհեր հարսը նրան ուղեկցեց բազմոցի մոտ, օգնեց պառկել: Պապի կծկված կերպարանքն անգամ պատկառանք էր ներշնչում: Գրեգորը հիշեց իր պապին՝ նրա եղբորը, որ այդքան պարթևասասակ չէր, բայց գլխի, ուսերի նույն գծագրությունն ուներ ու ավելի շատ նման էր հագաբանայ կաղնու, քան հիշողություններից կքած, եղեռնագարկ ու եղեռնապարծ ծերունու: Վարուժան պապը քիչ անց սկսեց համաչափ շնչել, պատմությունը շարունակեց թողնել երեք եղբայրների հայր Դուրանը:

– Մանուկյանները եղել են շերամարտնարաններից մեկի տերերը, գյուղում ու շրջակայքում մի քանի տուն, ամառանոց են ունեցել: Վարուժանը քրդին տարել է ամառանոցներից մեկը, ու պատկերացնում էր, այնտեղ գտել է իր գառամայլ պապին: Նա ասքորից առաջ գնացած է եղել ամառանոց, դրա շնորհիվ կարողացել է թաքնվել: Ինչնե, գանձը հանել են, մեծ մասը տվել քրդին, պապ ու թոռ էլ գյուղից փախել են եկել Վանի կողմերը: Այն, որ մենք լճափին սրճարան էք բացել, նվազախումբ ստեղծել, այդ գանձի շնորհիվ է: Բհարկե, մեծ մասը բաժին է ընկել թուրք պաշտոնյաներին, բայց մի քանիսը ջարդերից հետո խնայել են մերոնց կյանքը: Պապը հանուն Վարուժան թոռան ապա-



260

գայի հրապարակայնորեն կրոնափոխ է եղել, սկսել թուրքերի գործատներում ծառայել, բայց գաղտնի այնպես է արել, որ նա գիտակցի իր հայ լինելը և դրանից բացի իր սերունդներին էլ հայ պահի:

- Չեք հավատա, Գրեգոր, - ասաց Մուրադը, - բայց դա հաջողվել է: Թուրքիա պետությունում, որ հիմնականում Արևմտյան Հայաստանն է, շատ ծպտված հայեր են ապրում: Կրանք միշտ գաղտնի շփվել են իրար հետ, աղջիկ տվել-առել: Կրանք հայկական արյունը մաքուր են պահել:

- Գիտեմ, եղբայր, ոմանց հաշվարկով՝ այս պետությունում հիմա մինչև 5 միլիոն բնիկ հայ է ապրում:

- Այդքան շատ, - միաբերան բացականչեց ընտանիքը, - չի կարող պատահել:

- Կարող է և պատահել է, - ասաց Գրեգորը, - հիշե՛ք, թե թուրքերը որքան հայ էրեխաներ են որդեգրել, որքան հայ աղջիկներ են առևանգել, որքան մարդկանց են կարողացել դավանափոխ պնդել:

- Դավանափոխ իս, - բացականչեց Մուրադը: - Այսպես ւ:

Նա երկու ձեռքով բռնեց վերնաշապիկի օձիքն ու կուրծքը մերկացրեց: Ընտանիքի կանայք վախեցած ճչացին: Մուրադի կրծքին ոսկե շոթայից կախ շողողում էր դրվազազարդ խաչը:

Գրեգորը ծիծաղեց. - Ես դա սրճարանում էի նկատել:

- Ինչպե՞ս, - մտալվեց մեծ եղբայրը:

- Անհնար է, - առարկեց Մուրադը, - ես երբեք իմ գաղտնիքը չեմ մատնել:

- Դու չմատնեցիր, ես զգացի, - նրան հանգստացրեց Գրեգորն ու իր կուրծքը բացեց: Նույն խաչն էր:

- Իսկ ես մահմեդական եմ, - սառնորեն հայտարարեց ավագ եղբայրը: - Եվ մտադիր չեմ քրիստոնյա մկրտվել: Դա չի խանգարում, որ ես ինձ հայ գզամ: Ու ընդհանրապես այն կարծիքին եմ, որ կարիք չկա հայ լինելու մասին չորսբորոր գոռալ: Թուրքը չի փոխվել, Հրանտին խփեցին մեզ էլ կխփեն: Մա մի հզոր պետություն է, որին պաշտպանում է թե՛ Ամերիկան, թե՛ քո այդ Եվրոպան:

- Մտածելիս մարդ քիչ է մտում խելագարվի, - բռունցքը սեղանին զարկեց միջոնեկ եղբայր Կանաս տանելիս: - Մենք ինչու պետք է շնջալով խոսենք մեր հայ լինելու մասին, մենք դա ինչու պետք է թուրքերեն խոստովանենք: Ո՞վ է սահմանել այս անարդար կարգը: Ո՞վ է ծնել Թուրքիա կոչվող գիշատիչ գազանը, որ խժռում է մերենայն մտացի արարածի, վերացնում ամենայն բարձր արժեք:

- Դրա համար եմ ասում, պետք է զգույշ լինենք, - խոսքն ավարտեց ավագ եղբայրը:

- Թուրքիան փոխվում է, - չհամաձայնեց Գրեգորը: - Ես հիմա ձեզ ցույց կտամ մեր ամսագրի համարները:

Տղամարդիկ հավաքվեցին համակարգչի շուրջը, Գրեգորը համացանցում բացեց ամսագրի կայքը, գտավ իր հոդվածները: Թուրքիայի ծպտյալ հայերի մասին նյութերը գրվել էին Հրանտի սպանությունից հետո և ներկայացնում էին այդ երկրում կատարվող մերկ իրողությունները:

- Ուրեմն մենք այսքան շատ ենք, - անընդհատ հարցնում էին միմյանց: - Այս ցեղասպան երկրում այսքան հայ կա, այսքան հայկական արմատ:

- Այո, հարգելիներս, - ասաց Գրեգորը, - և բնավ կարևոր չէ, որ մեծ մասը դավանափոխ է կամ հայերեն չի խոսում: Մարդու հորինած

ոչ մի կրոն չի կարող հային զրկել իր արարչական գենից: Ինչ վերաբերում է լեզվին՝ Թուրքիան պարտավոր է հարգել ազգային փոքրամասնությունների իրավունքները, ու չնայած արևմտահայերենն աշխարհի ամենավատնագված լեզուներից է մենք մի օր մեր հայրենիքում մեր մայրենիով կխոսենք:

- Հավատո՞ւմ ես այդ հեքիաթին, - գրեթե մոնչաց ավագ եղբայր: Ընտանիքում, այո, նա ամենաթափափ համարում ունի, նրա ու Մուրադի միջև հաճախ են ազգային թեմաներով վեճեր լինում:

- Ես չեմ, - ծիծաղեց Գրեգորը, - աշխարհն է հավատում:

- Այդ աշխարհն ո՞ր էր, երբ մեկուկես միլիոնին սպանում էին, մյուսներին արտաքսում: Դրանից հետո էլ հայկական հետքերն են ջնջում, վերացնում, մշակույթն են ոչնչացնում: Մեր կանանց են սահաբեկում: Ստորներ...

Ավագ եղբոր ճակատին քրտինքի կաթիլներ էին շարվել, նրա կարմրած աչքերում կատաղություն ամբողջովին գրավել էր գերեզմանային քարեկոթողության տեղը: Ընտանիքի անդամները կարեկցությամբ նրան էին նայում, ապա միմյանց ու գլուխները ցավով օրորում:

- Որպես ուսուցիչները եմ ասում, - նրա հոգեմիճակը հարգելով մեղմամայի խոսեց Գրեգորը, - Թուրքիան տարեցտարի փոխվում է, մի քանի տարի առաջվա Թուրքիայից քիչ բան է մնացել: Ո՞վ կպատկերացներ, որ Մտամբուլում ցեղասպանության զոհերի հիշատակ կողեկոչվեն: Որ պատմաբաններն ու քաղաքական գործիչներն այդ մասին առանց բանտարկվելու վախի կխոսեն: Որ հայկական դարձյալներ կբացվեն, դասագրքեր կտպագրվեն, եկեղեցի կօծվի: Առաջադիմությունը հասել է նրան, որ Հայոց ցեղասպանության մասին գրելու համար թուրք գրողին Նոբելյան մրցանակ են տալիս: Ասել է, թե աշխարհ անտարբեր չէ այդ հարցի հանդեպ: Եվ հետո՞ մի կարևոր փաստ էլ կա. արդի գիտությունը քայլ առ քայլ ապացուցում է, որ Հայկական լեռնաշխարհն է մարդկության բնօրրանը, իսկ հայը քաղաքակրթության առաջին կերտիչը: Մոլորակում սփռված հայկական հետքերը շուտով կդառնան գիտական կուռ ամբողջություն, ու մարդկությունը պարտավորված կլինի մերը վերադարձնել մեզ: Առնվազն մեզ նոր արհավիրքներից պաշտպանել: Հայն Արարչի հունդն է, իսկ թուրքը քամու բերած անարմատ որումը, որն օրերից մի օր պիտի չորանա ու անհետանա: Այս բոլորն իրականություն է:

- Բայց ամենակարևոր իրականությունն այն է, որ մենք մեր բնօրրանում ներկա ենք, - բացականչեց ոգեշնչված Մուրադը: - Մենք պետք է կառնենք բախտից շնորհված այս թելից: Կաղն իմ համերգի ժամանակ ես կհայտարարեմ, որ հայ եմ, ես կվերականգնեմ իմ հայկական ազգանունը և կկատարեմ իմ ազգի մեղեդիները: Ես դա կանեմ: Ես Մտամ-

բուլ կմեկնեմ իմ «Հայաստան» խմբի հետ՝ իմ Միասն Մանուկյան անունով:

- Տե՛ր Աստված, - լավեց պապի բազմոցից, - շնորհակալ եմ, որ սա տեսնելու համար ինձ 108 տարվա կյանք տվեցիր:

Ընտանիքը լսածից ու զգացածից նոր ուժով խանդավառվեց, շուրջանակի շարվեց Կարուժան պապի բազմոցից պարագծով: Կանացի ու այրական թևերը միահյուսվեցին, ոտքերը դա դարձրին հայկական շուրջպար: Շարժվում էին հրայրքով, բայց լուռ, պրկված շուրթերով, հայացքներն առաստաղից վերև ուր որ: Գրեգորը մտահոգ էր. նա լրագրողական վտանգներով լի կյանքում թուրքական մեծամտությանն ու դաժանությանը բախվելու շատ առիթներ էր ունեցել: Ինքն օրինակ չի կարող մի տասն փոխել ու Գրեգորը դարձնել Գրիգոր, որովհետև կզրկվի իր պապերի երկիրը գալու թույլտվությունից: Դեռ պետք է օտար քաղաքացիությամբ աշխատի, դեռ պետք է զգուշանա, տարբեր հարցերում խուսանալի, մինչև Թուրքիա կոչվող կեղծ պետության պարագլուխները հասկանան, որ իրենք այդ հողին ոչինչ չեն ստեղծել միայն ավերել են, ոչնչացրել, սպանել, թալանել, ստել... Հասկանան, որ այդ հողին գոնե մի փոքրիկ կտոր գրադեցնելու իրավունքը վաստակելու համար պետք է հայությանն ու մյուս ազգերին հատուցեն:

- Գրեգոր, - լուսադեմին, երբ զգացմունքները տեղը զիջել էին սառը դատողությանը, - ձայնե՛ք Մուրադը, - Հայաստանը շատ աղքատ երկիր է, ճիշտ է, որ հայերն այնտեղից գաղթում են ուրիշ երկրներ: Ես Հայաստանին ինչու՞ վ կարող եմ օգնել:

Գրեգորը տարեկան գոնե մի անգամ Երևան էր այցելում, Մուրադ-Միասնի մտահոգությունը նրան անհիմա թվալ էր:

- Եղբայրս, լավ թե՛ վատ Հայաստանը պետություն է: Եթե 15-ին մենք գոնե նման մի պետություն ունենայինք ոչ մի եղեռն տեղի չէր ունենա: Մեր պետությունը դեռ կզարգանա, նրա համար հանգիստ եմ: Հիմա պետք է այս Էրզնի բոլ պահենք:

- Պահում ե՛ք, եղբայրս, որովհետև այստեղ մենք կանք «ու պիտի շատանանք»: Սևակ է, չէ՞: Իսկ համերգի կգա ւ:

- Այդպիսի համերգին ո՞վ չի գա, Միասն:

Այգում էին, երկուսով շրջում էին լուսաբացի շողերով ողողված ծառուղուն:

- Որոշել էի անակնկալ անել, - ծիծաղելով իր գաղտնիքը բացեց Գրեգորը, - բայց իմացիր այդ դահլիճը երկու Միասնով եք նվաճելու:

- Հրաշալի է եղբայրս... Բայց դու չպապիր, թե երեք տարի առաջ Չենգիլայում ի՞նչ էիր անում...

- Ուզում էի ապացուցել, որ Թուրքիան մի օր կարթնանա ու կասի՝ Ես հայ եմ:

Պրաչուհի ՓՆԱՆՆՈՒՅԱԼՍ  
Մայիս, 2013 թ. Երևան

### Մեծ բանաստեղծուհու 95-ամյակին

Հայ մեծ բանաստեղծուհի Միլվա Կապուտիկյանի ծննդյան 95-ամյակի առթիվ օրերս Մոսկվայում կայացավ այստեղ գործող «Դեբյու» գրական-մշակութային ակումբի հերթական երեկոն: Հավաքույթի մասնակիցները արտասանեցին բանաստեղծություններ, կատարեցին Մ. Կապուտիկյանի բառերով երգեր, պատմեցին հիշողություններ բանաստեղծուհու հետ իրենց հանդիպումներից:

Ներկաներն առանձնակի հետաքրքրությամբ ունկնդրեցին երկու մանկահասակ աղջիկների, որոնք Մ. Կապուտիկյանի մանկական բանաստեղծությունների գեղեցիկ արտասանությամբ արժանացան ջերմ ծափահարություններին:

Հանդիպականների ուշադրությունը գրավեցին դահլիճում, հատուկ վահանակի վրա ցուցադրված Մ. Կապուտիկյանի ընծայագրերով գրքերը:

Հատուկ այս երեկոյի համար Մ. Կապուտիկյանի տուն-թանգարանից ստացվել էր և ցուցադրվեց մեծ բանաստեղծուհու մասին պատմող վավերագրական ֆիլմ:

Ռուսական ՄԻՍՎԱՐՅԱԼՍ

# 12 ճշմարտություն հայերի մասին, որը մոռացել է մարդկությունը. Բոգդան ԳԵՄԲԱՐՍԿԻ

## ԲՈԳԴԱՆ ԳԵՄԲԱՐՍԿԻ (1905–1978)

Լեհ հրապարակախոս, արևելագետ, թարգմանիչ: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին եղել է Վարշավայի (1944 թ.) ապստամբության ղեկավարներից, ձերբակալվել է, եղել համակենտրոնացման ճամբարում:

Հայանպաստ գործունեությունն սկսել է հասուն տարիքում:

Հայ ժողովուրդը երախտագիտությամբ է հիշում լեհ ժողովրդի նշանավոր գավակի հայանպաստ գործունեությունը, և պատահական չէ, որ նրա տապանաքարին դաջված է մարմարե փոքր խաչքար, ինչը Հայաստանից տարել է լեհուհի, երևանաբնակ Մարիա Գրոխոլսկան (1917-1989), ով գբաղվել է թարգմանությամբ:

«Նամակներ աշխարհին» գրքից ներկայացնում ենք «Առաջին նամակը իմ անծանոթ ընթերցողին»:



# ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿՆ ԻՄ ԱՆԾԱՆՈԹ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Այս նամակներս լույս են տեսնելու նաև հայերեն, իսկ հետո այլ լեզուներով, ըստ էության նրանք չեն հասցեագրված հայ ընթերցողներին. վերջիններս գիտեն այն, ինչ ես գրում եմ այստեղ: Իսկ եթե նույնիսկ չգիտեն ամբողջը, ապա առնվազն զգում են այն մեծ ճշմարտությունը, որը ես պետք է պատմեմ այլ ազգի մարդկանց, որոնք, ինչպես և ես, հայ չեն և մինչև այժմ բոլորովին չեն հետաքրքրվել Հայկական հարցով: Մակայն հասավ այն օրը, երբ Հայաստանն իմ երկրորդ հայրենիքը դարձավ իմ ընտրությամբ: Բայց դա չի նշանակում, թե ես հրաժարվում եմ առաջին հայրենիքից Լեհաստանից: Մերը երկուսի նկատմամբ էլ հիանալի տեղավորվում է սրտիս մեջ: Ու եթե ամեն ոք, հավատարիմ մնալով իր հայրենի երկրին, աշխատեր ճանաչել և անկեղծ սիրել որևէ այլ ժողովրդի, հավատացե՞ք ինձ, սիրելի ընթերցող, աշխարհն այլ պատկեր կունենար:

Այժմ ձեզ պետք է ասեմ, թե ինչու հենց Հայաստանը սիրեցի:

Հնդկաստանի հանգուցյալ պրեմիեր մինիստրը՝ Ջավահարլալ Ներուն, Անգլիայում դաստիարակված հնդիկ էր: Նախքան իր հայրենիքը Հնդկաստանը, սիրելը, պետք է հայտնագործեր այն: Ու հենց այդպես էլ նա վերնագրել է իր մեծ ստեղծագործությունը այդ երկրի մասին՝ «Հնդկաստանի հայտնագործումը»: Ես նույնպես պետք է հայտնագործեի Հայաստանը՝ նախքան նրան իր տառապանքների մեջ սիրելը, մանավանդ որ երակներինս մեջ չի հոսում հայկական արյան ոչ մի կաթիլ:

Այդ հայտնագործումը մեծապես ցնցեց ինձ: Կարծես գտա վաղուց կորած բանալին այն սենյակի, որի մեջ խառնիխուռն թափփված են ամբողջ մարդկությանը պատկանող գանձերը: Դրա համար երկար ժամանակ մարդիկ անցնում էին այդ սենյակի մոտով առանց նկատելու սարդոստայնով ու փոշով ծածկված այդ դուռը. մոռացել էին հրաշագործ բանալու մասին: Եղել են անհատներ, որոնք հանկարծակի պայծառատեսության պահերին հիշում էին հանկարծ նրա մասին, բայց չկարողացան բանալ կախարդական դուռը:

Ես էլ, ավա՛ղ, ինքս իմ սեփական ուժերով չեմ կարողանա բացել

այդ դուռը, եթե դու, անծանոթ ընթերցողս, չգաս ինձ օգնության: Դրա համար էլ հենց սկսեցի այս խոսակցությունը քեզ հետ: Չգիտեմ նույնիսկ թե ով ես դու, որովհետև չգիտեմ, թե որտեղ և ինչ լեզվով լույս կտեսնի, վերջապես, այս նամակը: Գուցե գյուղացի ես կամ արհեստավոր, գուցե գիտնական կամ բանվոր: Գուցե նաև նոր ազատագրված երկրներից մեկի քաղաքացին ես, կամ որևէ այլ անձ: Բայց ով էլ որ լինես, կկարողանաս շատ ավելի բան անել, քան ես, որովհետև ձեր եմ արդեն և հիվանդոտ, պակասում է ինձ նաև երիտասարդական եռանդն ու նախաձեռնությունը:

Խոստանում եմ քեզ մի բան. եթե կատարես այն, ինչի մասին խնդրում եմ քեզ, ապա հավերժ կհիշվես մարդկության պատմության մեջ: Իսկ դա արդեն շատ բան է նշանակում, այնքան շատ, որ միայն դրա համար արժե ապրել:

Կատարի ր միայն մեկ բան. օգնի՛ր ինձ բանալ կախարդված դուռը, իսկ եթե հանկարծ սիրտս դադարի բաբախելուց, եղի՛ր մեկը նրանցից, որոնք իմ սկսած գործը կհասցնեն մինչև վերջ:

Բայց նախքան ասելը, թե ինչպես եմ պատկերացնում քո մասնակցությունը այդ մեծ գործին, թու՛յլ տուր, որ նախ և առաջ պատմեմ քեզ իմ սիրո առարկայի մասին՝ առանց հողի մարդկանց մասին և առանց մարդկանց հողի մասին, որն Աստված անվանեց Հայաստան: Դա հենց այն Հայաստանն է, որ ես գտել, հայտնագործել եմ, ինչպես Կոլումբոսը հայտնագործել է Ամերիկան՝ Երկրի վրա, իսկ Ներունը Հնդկաստանը՝ իր սեփական սրտի մեջ:

Լեհերենում գվարճալի մի դարձվածք կա. «Մկսել ինչ-որ բան Ադամից և Եվայից»: Չգիտեմ ուրիշ լեզուներում նման դարձվածք կա՞, թե ոչ, բայց, այնուամենայնիվ, Հայաստանի մասին իմ պատմությունն սկսել Ադամից և Եվայից:

Գիտե՛ք, արդյոք, թե որտեղ էր բիբլիական դրախտը: Մուրբ Գիբբը շատ ստույգ ասեմանում է նրա դիրքը. գտնվում է նա չորս գետերի ակունքների շրջանում: Նրանցից երկուսը Եփրատն ու Տիգրիսն էին: Բավական է նայել քարտեզին, որ գտնենք նաև մասացած երկուսը՝ Ճորոխն ու Արաքսը: Իսկ երկիրը, որի տարածքում գտնվում էր դրախտը, այսպես կոչված Թուրքահայաստանն է, որի մասին

280

ստորև խոսելու ենք ընդարձակ:

Փակագծերի մեջ նկատեն, որ մյուս բիրիլիական փաստը՝ Նոյի ճանապարհորդությունը ջրհեղեղի բարձրացած ջրերով, տեղի է ունեցել նույնպես նույն հետագա Թուրքահայաստանի այդ տարածքի վրա: Այնտեղ՝ այդ երկրի հյուսիսում, խոյանում է երկու գագաթով մի մենավոր լեռ՝ Մասիս կամ, ինչպես նրան անվանում ենք Արարատ, որի վրա կանգ առավ Նոյի տապանը: Մի խոսքով, Մուրք Գրքի համաձայն՝ Հայաստանը եղել է ամբողջ մարդկության օրրանն ու երկրային դրախտը:

Մակայն մարդկությունը մոռացել է, թե որտեղ էր գտնվում իր դրախտը, որը կրկին գտնելու մասին երազում էր հանձարեղ Միլտոնը: Եվ դա եղել է մարդկության կողմից մոռացված **առաջին մեծ ճշմարտությունը:**

Հետագայում այդ տարածքի վրա թագավորել են շատ արքաներ, որոնց մասին հիշատակում են բաբելական և ասորական աղբյուրները: Այդ երկիրը, որ տեղական ավանդությունը անվանում էր Նաիրի, շարունակում էր մտալ խիտ բնակեցված, հարուստ և կենսապաշտ. չնայած որ գտնվում էր այն ժամանակվա մեծ քաղաքակրթության ծայրամասերից մեկում և շատ հին էր: Այնքան հին էր այդ երկիրը, որ երբ առաջին բանական արարածները սկսեցին կառուցել առաջին տեղությունը, ապա դա կարծես թե պետք է լինեին հենց այստեղ և ոչ թե Եգիպտոսում կամ Բաբելոնում: Միայն թե մարդկությունը այդ մասին մոռացել է: Եվ դա մարդկության կողմից մոռացված **երկրորդ մեծ ճշմարտությունն է:**

Քրիստոսի թվարկությունից առաջ 9-րդ դարի սկզբին, այսինքն՝ 3000 տարի սրանից առաջ, այդ տարածքի վրա գոյացավ Ուրարտու կոչված մեծ տերությունը, որի սահմանները ընդգրկում էին այսօրվա ամբողջ Հայաստանը՝ թուրքական և խորհրդային, իսկ հյուսիսում սահմանը նույնիսկ հասնում էր Վրաստանին:

Լեզուն, որով խոսում էին ուրարտացիները, դեռ հայերեն չէր, ճիշտ այնպես, ինչպես ուրարտացիների նախորդները՝ Նաիրիի ժողովուրդը խոսում էր նրանցից տարբեր լեզվով: Չէ՛ որ լեզուն ենթացա է անընդհատ փոփոխությունների: Հին հռոմեացիները գուցե խոսում էին էտրուսկերեն, իսկ նրանց հաջորդները՝ իտալերեն: Ու, չնայած դրան, վերջիններս հռոմեացիների ու էտրուսկների օրինավոր ժառանգներն էին: Նմանապես այստեղ:

Ուրարտուի կամ հետագա հայկական թագավորության (որովհետև դա միննույն տարածքն է) սահմանները հեշտ է գտնել մեր ժամանակակից Մերձավոր Արևելքի ուժգեք քարտեզի վրա:

Ուղղակի այսօրվա Թուրքիայի ամբողջ արևելյան մասը, որը կարծես խցկված է հարավում Միդիայի և Իրաքի, իսկ հյուսիսում՝ Խորհրդային Վրաստանի միջև: Եվ դա հենց այն տարածքն է, որի մասին է մեր խոսքը, այն տարբերությամբ միայն, որ Արևելքում այն ավելի հեռու էր տարածվում: Այսօր այդ տարածության 9/10-ը պատկանում է Թուրքիային, իսկ 1/10-ը՝ Խորհրդային Միությանը:

Մակայն վերադառնանք այն հետավոր ժամանակներին: Քարտեզի վրա գտնենք Վանա լիճը և նույնանուն քաղաքը՝ նրա արևելյան ափին (այն ժամանակ նա կոչվում էր նաև Տուշպա): Դա Ուրարտուի մայրաքաղաքն էր: Եվ այդ ամբողջ տերությունը պատմիչները հաճախ անվանում են Վանի թագավորություն:

Այն ժամանակներից մինչև օրս պահպանվել են ժայռերում փորված եկեղեցիներ ու դամբարաններ, բազմաթիվ աշտարակների ու դղյակների ավերակներ և խողովակներ, որոնք քաղցրահամ ջուր էին հասցնում քաղաքին 70 կմ վրա գտնվող հեռավոր սարերից (Վանա լճի ջուրը աղի է, քան ամենաաղի ծովի ջուրը):

Ուրարտուն ոչնչացվել է մարերի կողմից, որոնք հարձակվել են նրա վրա 6-րդ դարում՝ Քրիստոսի թվարկությունից առաջ: Բայց նույն դարում նրա ավերակների վրա գոյացավ և կառուցվեց նոր տերություն՝ Հայաստանը: Պարսկաստանի թագավոր Դարեհը ստիպված էր բավական երկար ժամանակ պայքարել հայերի դեմ և հինգ անգամ պարտություն էր կրել նրանցից: Բայց վերջապես նա, ըստ երևույթին, հաղթեց նրանց, որովհետև հայերի երկիրը մտավ Պարսկաստանի 12 և 18րդ սասորապությունների մեջ... Եվ այս վիճակում մնաց մինչև Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակները:

Մի խոսքով՝ այս առաջին հայկական տերությունը գոյություն է ունեցել կարճ ժամանակ, և համեմատաբար քիչ բան գիտենք նրա մասին:

Մակայն հայկական թագավորությունը վերածնվեց 189 թ. Ք. թ. ա.: Նրա հիմնադիրը եղել է Արտաշես I թագավորը, իսկ թագավորության նոր մայրաքաղաքը Արտաշատը կառուցվել է Հաննիբալի նախագծի համաձայն. Հաննիբալը ժամանակավորապես ապաստանել էր Հայաստանում:

Այդ երկրորդ հայկական թագավորությունը գոյություն է ունեցել 618 տարի, այսինքն՝ մինչև Քրիստոսի թվարկության 429 թ., երբ նա փրացվեց Պարսկաստանին:

Այդ շրջանում Հայաստանը եղել է այն ժամանակվա աշխարհի ամենաքաղաքակիրթ կենտրոններից մեկը:

Մեր թվարկության I դարում այնտեղ արդեն կային թատրոններ, մատենադարաններ: Բանաստեղծները գրում էին գանազան ստեղծագործություններ, պոեմներ, իսկ գրելուց ազատ ժամանակ ջախջախում էին հռոմեացիներին, որոնք երբեմն այդտեղ ոտընձգություններ էին կատարում: Եվ պետք է ասել, որ հենց Հայաստանն էր այն երկիրը, որն առաջինն ընդունեց քրիստոնեությունը՝ որպես պետական կրոն, դեռևս 301 թ. (այսինքն՝ Հռոմից 12 տարի առաջ): Դրա մասին նույնպես մոռացել է քրիստոնեական աշխարհը: Եվ դա նրա կողմից մոռացված **երրորդ մեծ ճշմարտությունն է:**

Այն հնագույն ժամանակներում գոյություն ունեին երեք մեծ կրոններ, որոնք պայքարում էին միմյանց դեմ՝ ամբողջ աշխարհին տիրելու համար: Մեկը հենց քրիստոնեությունն էր, երկրորդը՝ արիտասականությունը, երրորդը՝ գրադաշտականությունը: Արիտասականի առաջխաղացումը զսպում կամ կասեցնում էին ֆրանկները, իսկ գրադաշտականի առաջխաղացումը կասեցնում էին հայերը:

Չգիտեմ, սիրելի ընթերցող լսել ես արդյոք, թե ոչ: Բայց նույնիսկ եթե ոչ, դարձյալ պետք է ընդունեն, որ քրիստոնեությունը ճանապարհ է հարթել ժամանակակից մշակույթի համար: Ու թեև մեր կյանքում ամեն ինչ չէ, որ մեզ դուր է գալիս, սակայն ստիպված ենք հաստատելու, որ քրիստոնեության կողմից ստեղծված մշակույթը հիմնականում վատը չէ: Եվ ահա այն ամենը, ինչով մենք այժմ ապրում ենք, այն հեռավոր ժամանակներում ոչնչացված կլինեի իր սաղմավորման փուլում, եթե հայերը չպաշտպանեին քրիստոնեական մշակույթը: Նույնիսկ 429 թ., իրենց անկախությունը կորցնելուց հետո նրանք այնքան ուժեղ դիմադրություն էին ցույց տալիս արշավողներին (450-451 թթ. Վարդանանց պատերազմը և ուրիշները 481-484 թթ.), որ արգելում էին հեթանոսների շարժումը դեպի Արևմուտք: Մի խոսքով, հայերը փրկեցին քրիստոնեությունը:

Բայց քրիստոնեական աշխարհը այդ մասին էլ մոռացավ: Եվ դա նրա կողմից մոռացված **չորրորդ մեծ ճշմարտությունն է:**

Քաղաքական անկախության կորուստը բնավ չի կտորել այդ հերոս ժողովրդի դուրսգնական ոգին: Քրիստոսի թվարկության 5-րդ դարում հայկական մշակույթը այնպիսի ծաղկման հասավ, որ կոչվեց հայկական մշակույթի Ոսկեդար: Իրոք, Ոսկեդար էր դա, հատկապես գրականության ասպարեզում՝ թե՛ ինքնուրույն և թե՛ թարգմանական:

Հաջորդ դարերում հայերը ոչ միայն ստեղծում էին փիլիսոփայական, պատմական և գեղարվեստական աննման աշխատություններ, այլև շարունակում էին շատ թարգմանել: Ծնորհիվ դրանց միայն նրանց թարգմանություններով պահպանվել ու մեզ են հասել Հին Հունաստանի և Հին Հռոմի բազմաթիվ մեծ մտածողների ստեղծագործությունները: Հայերն են (և մասամբ արաբները) մարդկության համար պահպանել հնագույն մշակույթի գոհարները: Բայց աշխարհը այդ մասին ևս մոռացավ:

Եվ դա նրա կողմից մոռացված **հինգերորդ մեծ ճշմարտությունն է:**

Այնուհետև գրադաշտականության և արիտասականության տեղը պատմական ասպարեզում հայտնվեց իսլամը: Եվ կրկին քրիստոնեական Բյուզանդիան և Արևելքից եկող նոր հավատքի միջև անկոնքեցի հայերը: Այդ նրանք ութ դարով ուշացրին Կ.Պոլսի անկումը, մի բան, որ պատմության մեջ պետք է գրանցված լինի որպես հայերի ամենամեծ ծառայությունը քաղաքակրթությանը առհասարակ և քրիստոնեական քաղաքակրթությանը՝ հատկապես: Միայն թե այդ մասին էլ է մոռացել աշխարհը: Եվ դա նրա կողմից մոռացված **վեցերորդ մեծ ճշմարտությունն է:**

Արաբների դեմ մղվող պայքարի բոցերի մեջ հայկական փոքրիկ անկախ իշխանություններից կազմվեց երրորդ Հայկական թագավորությունը, որն այս անգամ գոյություն ունեցավ միայն 160 տարի (885-1045) և ոչնչացվեց հենց բյուզանդացիների կողմից, որոնք դրանով իրենք իրենց ձեռքով տապալեցին քրիստոնեական ամբողջ իրենց տերության արևելքում: Ու հետևանքները չհապաղեցին: Երեք տարի անց (1048) արդեն տապալված Հայաստանի վրայով գլորվեց սելջուկ թուրքերի առաջին ալիքը՝ ազդարարելով Բյուզանդիայի մոտալուս անկումը:

Քրիստոնեական Արևելքն ինքը ոչնչացրեց նրանց, ովքեր 800 տարիների ընթացքում պաշտպանում էին իրենց պարսիկներից ու արաբներից, և դրանով իսկ ինքն իր ղոնները բացեց հեթանոսական ամենասարսփելի արշավողների թուրքերի առջև:

290

Այսօր այդ մասին էլ աշխարհը չի հիշում: Եվ դա նրա կողմից մոռացված **յոթերորդ մեծ ճշմարտությունն է:**

Լավ չէ, երբ մարդիկ իրար սպանում են նրա համար միայն, որ ցույց տան, թե իրենց կրոնը ավելի լավն է: Մակայն այն հեռավոր ժամանակներում մարդկությունը դեռ չէր հասունացել այդ պարզ ճշմարտությունը հասկանալու աստիճանի: Եվ դրա համար այդքան շատ ոճիրներ են կատարվում երկու կողմից էլ, ըստ որում քրիստոնյաները իրարից անգամ ավելի վատ էին վարվում, քան մուսուլմանները: Չէ՞ որ քրիստոնեական կրոնը քարոզում է սեր ամեն մարդու: Նկատմամբ անկախ նրա ազդեցությունից ու հավատքից: Իսկ տիրությանը հիշվող «խաչակիրները» փառավորեցին իրենց այնպիսի արարքներով, որ մինչև օրս մտաբերելիս ստիպված ենք կարմրելու:

Մակայն այդ ամենը հայերին չի վերաբերվում: Նրանք ոչ ոքի ուժով չէին պարտադրում ընդունել քրիստոնեություն: Պաշտում էին իրենց հողը և իրենց հավատքը: Ու դրանով միաժամանակ պաշտպանում էին իրենց թիկունքում ապրող քրիստոնյա հավատքի ուրիշ ժողովուրդների հողն ու հավատքը: Եթե ուրիշ ժողովուրդներ վատ քրիստոնյա են եղել, ապա հայերն այստեղ մեղք չունեն:

Ինչևիցե, 11-րդ դարի վերջում Եվրոպայից շարժվեց խաչակիրների առաջին արշավախումբը, որպեսզի, ինչպես հայտնի է, ազատի Քրիստոսի շիրիմը: Մակայն նրանք մտառացան ազատել Եվրոպայի ամենաերկարամյա պաշտպանին քրիստոնեական Հայաստանը: Եվ դա եղավ հերթական **յոթերորդ մեծ հանցանքը՝ ընդդեմ ճշմարտության, երախտագիտության և արդարության:**

Հայերի մի մասը, որոնց բյուզանդացիները բուն Հայաստանից տեղափոխեցին Կիլիկիա (որտեղ հետո բնակվում էին նրանց ազգակից ժողովուրդները), 1080 թ. ստեղծեց այստեղ ըստ հերթականության չորրորդ հայկական թագավորությունը, որը գոյատևեց համարյա 300 տարի (1080-1375)՝ դառնալով Արևելքի ամենաքաղաքակիրթ տերություններից մեկը: Իսկ եթե այստեղ ստեղծված հայկական պատմական գրականությունը չլիներ, հնարավոր չէր լինի այսօր վերանայնել խաչակիրների արշավանքների, ինչպես նաև Արևելքի քրիստոնեական մանր տերությունների պատմությունը: Ինչ արած, աշխարհը նորից մոռացավ օգնության հասնել պատմականորեն արդեն հայկական այդ վերջին թագավորությանը, երբ հասել էր նրա ծանր ժամը: Եվ դա եղավ **ըստ հերթականության իններորդ մեծ հանցանքը՝ ընդդեմ ճշմարտության**, պարտականության և քաղաքական բանակամոլության: Դրա համար շուտով վարձահատույց եղան սերբերը՝ 1389 թ. Օուռ դաշտում տեղի ունեցած ողբերգական ճակատամարտից հետո կորցնելով իրենց անկախությունն ավելի քան 500 տարով: Իսկ քիչ հետո նրանց բախտակից դարձան նաև բուլղարները՝ 1393 թ. Տիրնովոյի անկումից հետո: Չէ՞ որ չկան մեկուսացած փաստեր: Առանձին ժողովուրդների պատմությունը զարգանում է հարողակից անտյուրի միջոցով: Լուսինյանների հայկական թագավորության անկման և սերբական Լազարի տերության օսմանթուրքերի կողմից ոչնչացման միջև ակնհայտ է կապը, որի մասին այստեղ չեմ խոսելու:

Կիլիկիայի թագավորության ամբողջ գոյության ընթացքում Մեծ Հայքը կամ բուն Հայաստանը ծանր կացություններ շատ է ապրել հաջորդաբար ընկնում էր սելջուկ թուրքերի տիրապետության տակ, որն այդ վերջինները հասկանում էին շատ պարզեցրած. ուղղակի մորթում էին իրենց նոր հպատակներին: Հետո Հայաստանը բաժանված մասց մի շարք սելջուկ-աբաբիստոնեական էմիրությունների միջև, որոնք անընդհատ կռվում էին միմյանց դեմ: Այնուհետև 1170-1236 թթ. այստեղ գոյացավ Վրաստանին ենթակա հայկական վասալ իշխանության պետ մի բան: Բայց մոնղոլները նրանց սրբում են աշխարհի երեսից:

Այստեղ չենք պատմելու իրար հաջորդող մոնղոլական տիրապետությունների մասին 150 տարի, այսինքն 1236-1386 թթ. ընթացքում Հայաստանի ողբերգական պատմությունը, ինչպես նաև նրա հարյուրապատիկ սարսափելի պատմությունը Լենկ-Թեմուրի և թուրքմենական Կարա-Կոյունլու և Ալ-Կոյունլու ցեղերի տիրապետության ներքո, որոնք փոխադարձաբար իրար կոկորդից էին բռնում ընդհուպ մինչև 15-րդ դարի վերջը: Պարզ բան է, որ վայրենիների այդ բոլոր հաշվեհարդարներին անընդհատ հետևում էին տարաբախտ հայերի կոտորածները: Շատ բան չի փոխվել նրանց վիճակում դեպի լավը նաև հաջորդ հարյուրից ավելի տարիների ընթացքում (1502-1639), երբ Հայաստանը սկսեց ձեռքից ձեռք անցնել պարսիկներից օսմանյան թուրքերին և հակառակը: Ըստ որում, պարսիկները տեղահան էին անում հայերին սահմանամերձ շրջաններից հրդեհելով նրանց տները, իսկ թուրքերը հրդեհում էին տները,

բռնաբարում ու ստրկացնում էին ողջ մասնաճյուղերին: 1639 թ. Հայաստանը վերջնականապես բաժանվեց երկու մասի՝ Արևմտյան կամ Թուրքական և Արևելյան կամ Պարսկական: Սկսեցին ստեղծվել երկու գրական բարբառներ՝ արևմտահայերենը և արևելահայերենը: Այդ բաժանումը մնում է մինչև օրս, միայն թե Պարսկահայաստանը (անհամեմատ փոքր) հետո անցավ ռուսական ցարական կառավարությանը, ինչի մասին ստորև խոսելու ենք, իսկ Թուրքահայաստանը (ամբողջ 9/10 մասը) թուրքերը դարձրին կատարյալ անապատ, այդ մասին նույնպես խոսելու ենք ստորև:

Հայերը որքան ուժ ունեին պաշտպանում էին իրենց հողը: Վրացիների հետ մեկտեղ կրծքով դիմադրում էին մոնղոլներին, երկու անգամ ապստամբեցին նրանց դեմ (1249 և 1261 թթ.): Բայց հետո երկար ժամանակ նրանք չունեին ոչ ուժ և ոչ էլ թափելու արյուն: Միայն ամենազարմանալի պատերազմի ժամանակ, որ Պետրոս Մեծի Ռուսաստանը մղում էր Պարսկաստանի դեմ, Պարսկաստանը Թուրքիայի դեմ և Թուրքիան Ռուսաստանի դեմ, հայերի գորավար Դավիթ Բեկը երեք կողմը բանակի արանքում ստեղծեց հայկական տերություն, որը ճանաչվեց երեք կողմը պետությունների կողմից էլ: Մակայն այն գոյատևեց շատ կարճ (1722-1730), այսինքն մինչև Դավթի ժառանգ Մխիթարի դավադրական սպանությունը:

1828 թ. Ռուսաստանը իր տարածքը մեծացրեց Պարսկահայաստանի մեծ մասի հաշվին, իսկ 50 տարի անց (1878) Թուրքիայից խլեց Լարս և Արդահան հայկական մարզերը: Թվում էր, թե լիակատար անկախություն ստանալու հայերի երազանքները վերջապես իրագործվելու են: Բայց, ավա դ, ցարական Ռուսաստանն ամենևին միտք չունեց հարություն տալու Հայաստանին, թեև բազմիցս այդ խոստումներն արել էր Հայաստանին: Պարզապես հայկական հողերը միացրել էր իր տարածքին՝ որպես մի նոր նահանգ: Ու չգտնվեց մի նոր Բայրոն, որ հիշատակել Հայաստանի մասին այնպես, ինչպես ինքը՝ Հունաստանի մասին: Հերթով ազատագրվեցին Ռուսինիան, Սերբիան և Բուլղարիան: Իսկ Հայաստանի մասին այդ ամենահումանիտական 19-րդ դարում բոլորը մոռացել էին: **Տասներորդ անգամ էր դա, որ մոռացվել էր Հայաստանը:**

Ճիշտն ասած՝ չմոռացողներ էլ կային: Բայց նրանք հայ ժողովրդի բարեկամներ չէին, այլ ուղղակի որոշ էվրոպական երկրների փաստաբաններ, որոնք, Հայկական հարցը խաղաղակերպ իրենց համար հնարավորին չափ արտոնություններ էին պոկում Թուրքիայից: Ու այդ հարցով անվերջ գրգռում էին թուրքերին, մինչև որ հասցրին այն աստիճանին, որ հայ ժողովուրդը անհավոր գին վճարեց ոչ իր պարտքերի դիմաց:

Հայերը բնակվում էին ոչ միայն Թուրքահայաստանում, այլև ցրված էին ամբողջ Անատոլիայում և այն էլ դեռևս բյուզանդական ժամանակներից: Առանձնապես շատ էին նրանք Կիլիկիայում՝ նախկին Ռուբինյանների և Լուսինյանների թագավորության տարածքում: Իսկ բուն Անատոլիայի սահմաններից դուրս բնակություն էին հաստատել Սիրիայում և Լիբանանում ու նախ և առաջ հենց սուլթանի մայրաքաղաքում՝ Ստամբուլում (նախկին Կ.Պոլսում), որը 19-րդ դարում դարձավ թարքա-հունահայկական մշակույթի մեծ կենտրոն: Ըստ որում՝ հայկական տարրը գերակշռում էր մտավոր ասպարեզում: Այստեղ է հենց զարգանում արևմտահայ հոյակապ գրականությունը՝ Մերձավոր Արևելքի ամեն ամենահետաքրքիր գրականություններից մեկը:

Ստամբուլը տարբեր պատճառներով դարձավ արևմտահայերի հոգևոր կենտրոնը, բայց գլխավորապես նրա համար, որ այն ժամանակ Թուրքահայաստանում ավելի մեծ քաղաք չկար: Մնացած քաղաքները ոչնչացված էին վայրենիների տիրապետության 800 տարիների ընթացքում՝ սկսած ամենավաղ սելջուկ-թուրքերից մինչև ամենաուշ օսման-թուրքերը:

Այնուամենայնիվ, երկու մեծ քրիստոնեական գաղութների առկայությունը Ստամբուլում փուշ էր թուրքական կառավարության աչքերում, մանավանդ որ օտար պետությունները օգտագործում էին այդ փաստը ոչ թե ազգային փոքրամասնություն կազմող հայերին և հույներին օգնության ցույց տալու, այլ Թուրքիայի վրա ազդելու նպատակով, ստիպելով նրան, որ թույլ տա կոնցեսիաներ իր երկրում էվրոպական կապիտալի համար: Գնալով թուրքերի մեջ աճում էր ատելությունը քրիստոնյաների նկատմամբ... Սկսվեցին կոտորածները: Միայն թե այդ ատելությունը դրողներն ու գրգռողները, օտարերկրացիներ էին, իսկ զոհ էին դառնում այն անմեղ քրիստոնյաները, որոնց միայն կարելի էր անպատիժ սպանել: 19-րդ դարի առաջին կեսին դա գլխավորապես հույներն էին, իսկ 1876 թվականից՝ հայերը:

Հայերի անտանելի կյանքը Թուրքական տիրապետության ներքո

300

1915թ. հասել էր իր գագաթնակետին, երբ տանջալի մահվան դատապարտվեց համարյա ամբողջ արևմտահայ ժողովուրդը: Իրենց անկախությունը կորցնելուց հետո 870 տարի (1045-1915) առաջադրում էին նրանք այնպիսի տանջանքների մեջ, ինչպիսիք չի ճանաչել աշխարհիս ոչ մի ժողովուրդ: Բացի, գուցե միայն հրեաներից: Բայց հրեաները Երուսաղեմի անկումից անմիջապես հետո լքեցին հայրենի հողը, հնարավորություն ունենալով գոնե իրենց համար բնակավայր ընտրել: Եվ ամեն տեղ չէ, որ վատ էր նրանց համար :

Այսօր, ճիշտ է, աշխարհով մեկ ցրված են գաղթած հայերը: Բայց 1915 թ. առաջ թուրքահայերի ճնշող մեծամասնությունը մտում էր իր հայրենիքում: Դրանք գյուղացի հողագործներ էին: Եթե գաղթում էր այդ գյուղացին, ապա դեպի Ստամբուլ կամ դեպի Լիբանանի քաղաքները նույն թուրքական կառավարության սահմաններում: Քաղաքներում նրանք աշխատում էին որպես բանվորներ կամ արհեստավորներ: Ոմանք զբաղվում էին առևտրով և հակառակ տարածված բամբասանքների՝ եղել են ազնիվ առևտրականներ: Համենայնդեպս այդպիսի համբավ վաստակել են նրանք իմ հայրենիքում Լեհաստանում:

Շատ հայեր իրենց նվիրեցին մանկավարժական և մշակութային ստեղծագործ աշխատանքին: Նրանք մեծ արտիստներ են եղել արվեստի յուրաքանչյուր ճյուղում. նրանցից դուրս են եկել հանձարեղ բանաստեղծներ ու արձակագիրներ. մեծ երաժիշտներ, ակնառու նկարիչներ, հոյակապ շինարարներ, իսկ ամենից առաջ՝ ազնիվ աշխատավորների և հմուտ, բարեխիղճ արհեստավորների հսկայական մի զանգված: Ժամանակակից աչքի ընկնող հայ բանաստեղծ Պարույր Սևակը իրավամբ ասում է.

**Իսկ երբ ստիպված մեր հողն ենք թողել,  
Ուր էլ հասել ենք, որտեղ էլ եղել  
Ձանացել ենք մենք ամենքիս համար,  
Շինել ենք կամուրջ, կապել ենք կամար...**

Խնդրում են միշտ հիշել, որ Թուրքահայաստանի կազմում էր պատմական Հայաստանի 9/10 մասը: Դրա համար էլ, անհա, ոչ թե Պարսկական Հայաստանում (ուր վերաբերմունքը հայերի նկատմամբ անհամեմատ ավելի լավ էր), այլ հենց այստեղ բյուրեղացավ այն, ինչը որ 19-րդ դարի հրապարակախոսությունը անվանել է Հայկական հարց:

Այս տերմինը կյանք առավ Թուրքիայի սուլթան Աբդուլ Համիդ II-ի գահակալության ժամանակից (1876 թ.), որը 33 տարվա ընթացքում, այսինքն համարյա մինչև իր գահընկեցությունը (1909 թ.) հասցրեց իրագործել ութ մեծ կոտորած. դրանցից ամենամեծի ժամանակ սպանվեց մոտ 300 հազար հայ: Հայերին կոտորում էին թուրք կառավարության կողմից գրգռված քրդերը թուրք հասարակության տակաճանի հետ միասին: Թուրք գյուղացիները հիմնականում կոտորածների չէին մասնակցում, հասարակ թուրք ժողովուրդը բնավ չար չէ և ընդհանրապես կարողանում էր խաղաղ ապրել քրիստոնյա ժողովուրդների հետ: Եվ ընդհակառակը, սարսափելի չարացած էին այն մարդիկ, որոնք դրանից առաջ և դրանից հետո կառավարում էին Թուրքիան:

Չենց նոր նշեցի, որ եղել է 8 կոտորած, որոնցից ամենամեծի ժամանակ սպանվել է 200 հազար հոգի: Որքան հեշտ է գրել այդ մասին: Բայց ինչ սարսափելի բովանդակություն են պարունակում այդ խոսքերը: Այսպես, եթե գիշերը նայենք աստղալից երկնքին, ապա հասարակ աչքով ամբողջ երկնակամարում կարող ենք տեսնել շուրջ 4000 աստղ...:

Եթե դրանք միայն մեկ կոտորածի ժամանակ սպանված հայ տղամարդկանց, կանանց ու երեխաների մարմինները լինեին, ապա 75 անգամ ավելի պետք է լինեին, քան երկնքում մեր տեսած աստղերը:

Ու հիշիր միաժամանակ, որ այն ժամանակ արդեն դա փոքրաթիվ, հազիվ մի քանի միլիոնանոց քրիստոնյա ժողովուրդ էր, որը հարյուրամյակների ընթացքում հրաշքով պահպանում էր իր կյանքը՝ սպրեղով ու պայքարելով հավատքի, լեզվի, մշակույթի և ամեն տեսակետից իրեն օտար մուսուլման միջավայրում:

Վերևում հիշատակեցի արդեն, որ եվրոպական տերությունները խառնվում էին հայկական հարցին, միջամտում էին նաև այն ժամանակ, երբ նրանց միջամտությունը բնավ հարկավոր չէր ու միայն թուրքերին գրգռում էր հայերի դեմ: Բայց այդ հարցին խառնվող ոչ մի պետության կառավարություն այդ խնդիրը չդրեց ճիշտ հողի վրա, այսինքն չպահանջեց, չառաջարկեց անգամ թուրքական Հայաստանը վերածել անկախ պետության: Մինչդեռ այն ժամանակ կային արդեն անկախ պետություններ Հունաստանը, Սերբիան, Չեռնոգորիան, Բուլղարիան և Ռումինիան, հետո շուտով նաև Ալ-

բանիան, որոնք առաջ պատկանում էին Թուրքիային: Գուցե չէին ուզում բարկացնել ցարական Ռուսաստանին, որը հույս ուներ մտոնիկ պապազայում գրավել այդ տարածքները, ընդհուպ մինչև արաբական սահմաններ: Կամ գուցե ինչ-որ այլ պատճառներ կային: Բավական է, որ աշխարհը մտռացավ երեսուն հարյուրամյա հայկական պետության ավանդության մասին: Եվ դա **կրա տասնմեկերորդ մոռացությունն ու աններելի սխալն է:**

Չեմ կարծում, թե աշխարհիս երեսին գտնվող որևէ ուրիշ ժողովուրդ, որը ի վիճակի լիներ այդքան երկար դիմանալու անընդհատ շարունակվող արյունահեղությանը, ինչպես դիմացան հայերը 9 դարերի ընթացքում, տանելով միաժամանակ մշտական արհամարհանքը: Չէ որ վայրենի արշավողները (բացի մոնղոլներից) եղել են մոլի մուսուլմաններ և քրիստոնյաներին ավելի վատ էին նայում, քան շներին: Հոգու ինչպիսի տոկոսություն էր պետք այդպիսի պայմաններում կրոնափոխ չլինելու համար: Չէ որ դա այնքան հեշտ բան չէր: Ու մի անգամից կարելի էր ունենալ հանգիստ կյանք, և նույնիսկ արտոնյալ պաշտոն սերնդից սերունդ մուսուլմանների մեջ: Չնայած դրան կրոնափոխության դեպքերն այստեղ այնքան հազվադեպ են պատահել, որ գրեթե նշուժներ չկան այդ մասին:

Մակայն կոտորածները միակ ջրանցքը չէր, որով արտահոսում էր հայի արյունը: Երկրորդը ենիչերական այն զորագնդերն էին, ուր տանում էին ամեն տասներորդ հայ տղային, և այդ տղաները, պարզ բան է, արդեն մեկընդմիջտ կորած էին ժողովրդի համար: Եվ, վերջապես, երրորդ ամենալայն ջրանցքը եղել է ամենագեղեցիկ աղ-ջիկների փախցնելը համարյա 1000-ամյակի ընթացքում:

Իսլամը տղամարդուն ոչ մի սահմանափակում չի անում կյանքի ընկերուհի կամ ընկերուհիներ ընտրելու մեջ: Իսկ քանի որ Թուրքահայաստանում չի եղել մի անկյուն, ուր չպտտվեին գոնե մի քանի մուսուլմաններ՝ քրդեր կամ թուրքեր միշտ լավ գինված ու կոհիզների պատրաստ, ապա սպառնալիքներով թե գենքի ուժով քրիստոնյաներից ամենագեղեցիկ կանանց խլելը օրակարգի խնդիր էր: Հայ մորից և թուրք հորից ծնված տղան դաստիարակվում էր որպես թուրք՝ հպարտանալով իր «սալլետական» ծագումով և արհամարհելով խաղաղ տրամադրված մոր ժողովուրդը: Մակայն դա հսկայական ազդեցություն է ունեցել նոր սերունդների ռասայական պատկանելիության վրա: Այդ նոր սերունդների մայրերը, հաճախ նաև տատերն ու նախատատերը հայրուհի են եղել: Չէ որ թուրքերը, երբ Աստված նրանց ստեղծեց և բերեց Անատոլիա, ունեին շեղ աչքեր և դուրս ցցված լայն այտուկներ: Իսկ այսօր բավականին գեղեցիկ ժողովուրդ են, որովհետև **հայերից խլեցին կրանց սեփական արյունն անգամ:**

Մակայն հակառակ բազմաջրանցք հուններով հայկական արյան անընդհատ արտահոսքին, հակառակ մեծամեծ կոտորածներին և մշտական արհամարհանքին, հայ ժողովուրդը ջղաձգորեն իր սպառվող ուժերի մասցորդներով ամուր կառչում էր իր հավատքին ու իր լեզվին: Մեկ ուրիշ ժամանակակից հայ բանաստեղծ Գևորգ Էփրեմ համեմատում է նրան խաղողի վազի հետ, որն իր արմատները խրել է կարծր ժայռի մեջ ու սնվել այդ ժայռով:

Աբդուլ Համիդի արյունարբու կառավարության անկման պահին, այսինքն 1909 թ., հակառակ ամեն բանի, ամբողջ աշխարհում դեռ կար հինգ միլիոն հայ (Թուրքիայում մոտ 4 միլիոն): Բայց մոտալուտ պատերազմի մթնոլորտում աշխարհը դադարել էր նրանցով հետաքրքրվելուց՝ թողնելով նրանց երիտթուրքերի կուսակցության «պրոգրեսիվ ու լիբերալ» փոքրամասնության հոգատարությանը, այն կուսակցության, որն այն ժամանակ խոստանալով «միություն և առաջադիմություն» անցավ իշխանության գլուխ: Եվ դա եղավ իր հետևանքներով ամենասարսափելի **տասներկուերորդ սխալը:**

*Սեւ Գիրք. Նշանավոր օտարերկրացիները թուրքական ուղիների և Դայոց ցեղասպանության մասին*

**16-րդ դարի Աստվածաշունչ, որում հիշատակված է Մեծ Դայոցի քարտեզը**

ԱՄՆ Օրեգոն նահանգի Պորտլենդ քաղաքի Lewis&Clark քոլեջի ուսանող Մեմ Բուսսանը իր հետաքրքրափութային արդյունքում գրադարանի նկուղում հայտնաբերել է 1599 թ.-ի հրատարակության Աստվածաշունչ՝ Երիտարեթ 1-ի և Շերապիի Աստվածաշունչը, որում հիշատակված է Մեծ Դայոցի մասին:

Աղբյուրը նշում է Մեծ Դայոստան (The Great Armenia): Այս մասին հայտնում է ամերիկյան հեղինակավոր CBS հեռուստաընկերության կայքը: Մասնագետները նշում են, որ Աստվածաշունչի բացառիկ հրատարակության մեջ հիմնական գրառուժները ներկայացված են փայտի վրա արված բարդ պատկերազարդումների միջոցով:

Աստվածաշունչի մեջ «Եղևնական այգու իրավիճակը» բաժնում փայտե տախտակի վրա պատկերված են Մերձավոր Արևելքի և Մեծ Դայոցի, Բաբելոնի և Պարսից ծոցի քարտեզները:

Գրքում կա նաև գրառում, ըստ որի հայտնի է դառնում, որ այդ տպագրվել է Լոնդոնում Սեվգիայի թագուհու հրատարակիչ Քրիստոֆեր Բեքերի կողմից:

# ՏԱՐԵԼԻՑ

Ես չեմ մեռնի, ես կմնամ առանց քեզ՝  
 Անգութ, խրված սարդոստայնում օրերի,  
 Եվ իմ սառած աչքերի մեջ, քեզ ի տես,  
 Զուշդ գալիք հանցանքներս կների...  
 Ես չեմ մեռնի, ես կմնամ առանց քեզ,  
 Որ աղոթեմ հանուն փրկված սերերի...  
*Սամվել ՉՈՒԼՈՅԱՆ*



## Սամվել Չուլոյան 60 «Չուլո»

### Խնկալի անուն արդի գրականության մեջ

Միշտ չէ, որ բախտ է վիճակվում ներկայացնելու իսկապես բանաստեղծի: Տաղաչափական ծանծաղուտի մեջ սովորական է դարձած աչ ու ձախ շոտյլել «բանաստեղծի» վսեմական կոչումը հանգ ու չափի հասարակ որսորդներին: Այսօր, սակայն, մեզ վիճակված է այդ բացառիկ բախտը, և մենք մեծ սիրով ու հաճույքով կփորձենք ներկայացնել իրավ բանաստեղծ Սամվել Չուլոյանին:

Բոլորին էր Չուլոյն, բոլորին էր ու տիեզերքինը, խորն ու խորախորհուրդ, որ, ավա դ, 2000 թվականի մի տխուր առավոտ կորավ՝ մեր մեջ այդպես էլ չկային չհավատալով, որ հազիվ հասցրեց բացահայտել իրենից մինչև իրեն ու մի քառատող թողեց պոետական մահվան ճախրում:

... Վերջին բաժակի հետ պիտի պատռեմ կաշիս՝  
 Մորթն նետած դնին այդ լավելու,  
 Որ դուրս թռչեմ ջարդվող պատուհանից՝  
 Չյուների մեջ ծաղիկ որոնելու ...

16 տարի առաջ խոսքի ու գրի լուսաշխարհից անսպասելի տեղափոխվեց հավիտենական քնի ու լռության աշխարհ: Չուլոյանը չափազանց լեցուն էր այդքան կարճ կյանք ապրելու համար: Քիչ, բայց տարողունակ ժառանգություն թողեց «Ինձնից մինչև Ես» և «Մարդը պատի վրա» ժողովածուները (Չուլոն ինքը հաճախ էր կրկնում. «Իմ կյանքը նման է մի մարդու կյանքի, ով ապրում էր այս աշխարհն անդրաշխարհից բաժանող պատի վրա»):

Նրա թափառող հոգին անընդհատ որոնումների մեջ էր, իրենից մինչև ինքը որոնումների: Եվ ինչպես նրան կբնորոշեր գրչակից ընկերը Խորեն Գասպարյանը. «Չուլոն թափփված էր առօրյայում, բայց չափազանց կազմակերպված էր բանաստեղծական խոսքում: Ինքն ու մենք էլ չկարողացանք գնահատել իր մարդ արժեքը»:

Կորցնում ու նոր ենք գգում կորստի թանկությունը:  
 Այսպիսին է մարդկային կյանքը...  
 Գնահատելու համար, չգիտես ինչու, սովորաբար առիթ է պետք: Իսկ նա գրական իր անցած ճանապարհով մշտական գնահատանքի է արժանի:


Եթե այսօր Չուլոն լիներ մեր կողքին, կլիներ 60 տարեկան: Միջոցառումների հուշ երեկոների շարք տեղի ունեցան Վանաձորի պետական մանկավարժական համալսարանում, Երևանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը, բանաստեղծի անունը կրող Վանաձորի Հրանտ Մաթևոսյանի անվան գրադարանների կենտրոնացված թիվ 2 մանկական գրադարանում՝ նվիրված վաղամեդիկի 60 ամյակին, նրա «Թռչանաձուլք» պոեմ-



բալլադի ու բանաստեղծությունների ձայներիզի շնորհանդեսը (ձայներիզի գործերն ասմունքում է ՀՀ վաստակավոր արտիստ, «Կոմիտաս» մեդալակիր Մարգիս Լաջարյանը):

Նախաձեռնողներն էլ ՎՊՄ-ի գրականության ամբիոնը, Հայաստանի գրողների միությունն էին, ուր իրենց մասնակցությունն ունեցան ՎՊՄ-ի պրոֆեսորադասախոսական կազմը, ներկայացուցիչներ, ՀԳՄ Լոռու մարզային բաժանմունքի նախագահ Մանվել Միկոյանը, բանաստեղծ Արմեն Շեկոյանը, «Վան Արյան» հրատարակչատան տնօրեն, արձակագիր Վիլյամ Պողոսյանը, բանաստեղծուհի Լենա Անթառանյանը:

– Այս միջոցառումները, երեկոն ավելի շատ մեզ է պետք, քան Չուլոյին, քանզի մի անգամ ևս մենք հաղորդակցվում ենք նրա բարձրարժեք պոեզիային, որը կատարյալ դրսևորումներ ունի: Բոլորն էլ միակարծիք էին, որ նրա բոլոր գրածները նրա սևագրություններն են, բայց այդ սևագրությունները շատերի հազար անգամ խմբագրված ու մաքրագրվածներից ավելի մաքրագիր են, որովհետև իսկական պոեզիա է:



Վիլյամ Պոդոլյան



Չուլոյանների գերդաստանը

Չուլոն ապագայի պոետն է, նա նաև անցյալն ու ներկան կապող պոետն է, եզակիներից մեկը:

– Նրա գործերը մնայուն են, ներկայում պետք է փրկենք նրան իր իսկ վկայություններում: Նա նախ սիրո բանաստեղծ էր, հետո նրա գործերում տեղ գտան կյանքի ու մահվան դառնագույն շերտերը:

*Վալերի ՓԻՆՅԱՆ  
բանասիրական գիտ. թեկնածու*

Չուլոյի կենսակերպը անձրևոտ սիրո քաղաք Վանաձորն էր: Ու մեծն թումանյանից ու Ժառանգ հանձարներից էլ ժառանգեց բառի իր տիեզերական խոսքը:

Հասկանալի մարդ էր ու լավ ընկեր: Հասկանալի իր գրիչով, խոսքով, համոզմունքներով, պահվածքով... դրա համար էլ մեզ համար սիրելի էր ու պաշտելի:

**Էջը կազմեց Լևոն ԽԱՉԱՏՐՅԱՆԸ**

**Սամվել ՉՈՒՆՅԱՆ**

Երբ լեզենդները կտարալուծվեն  
ժամանակի մեջ,  
Ու երբ դադարեն անձրևներ մաղել  
Ճամփեքի վրա,  
Եվ երբ կավարտվի  
հատվող գծերի խոսքը անընդմեջ, –  
Ես կհայտնվեմ, ու կհանդիպեմք  
հանկարծ, ակամա:  
Ու չես հավատա դու ճամփաների  
խափուսիկ խաղին.  
Դու ինձ թաղել ես վաղուց  
հեռավոր Տրոյայի տակ, –  
Ես կգամ, ինչպես չնչին մի բեկոր  
կործանված նավի...  
Ես կգամ, ինչպես գալիս են  
երկրից անդրջիրիմյան,  
Ու քո տան առաջ կկանգնեմ  
որպես Տրոյական ձի,  
Ցնցոտիավոր այն բախտախնդիր  
արքայի նման...  
Կգամ, որ Կամբը՝ աստվածախնամ  
սխալի ճշտի...  
Ու նորից բախտի ու աստվածների  
կամքին հակառակ  
Ես պիտի գրեմ տաճարի պատին  
ձեռքով մարդկային,  
Որ ես եմ՝ Մարդը, որն ապրել գիտի  
տղթությունը համառ,  
Որ ես եմ՝ Մարդը, մաքառող գոյի  
ասքը երկնային:

Ինձ ջնջել եմ երեկվանից,  
Ու ձեր միջից արդեն չկամ,  
Օրապակաս էն խելառից  
Եկա վերջին բարևս տամ...  
Լի անպակաս ես սեղանին  
Ես մեկ լեղի, մեկ կենաց թաս,  
Պիտի ջարդվեմ միանգամից,  
Մնացողաց շախն անպակաս...  
Երանի քեզ, և մեղա ինձ,  
Եվ օրերին էն գժավուն,  
Ինձ նմանակ ձեր նմանին

Հիմա եմ մենակ թաղում...  
Հիմա ես եմ , ձեր մեջ չկամ,  
Ինձ ջնջել եմ երեկվանից,  
Մնացողաց շախն անպակաս,  
Երանի ձեզ, ողորմի ինձ...

**Ինձնից մինչև ես**

**1.**

Հորիզոնը դեռ տանում է երեկվա  
Շուկները, խորհուրդները հեռավոր...  
Մուտ է, արդեն ինձ չես գտնի, ես չկամ,  
Վաղն իմը չէ, չեմ ունենա և այսօր:  
Լոկ ստվերս է հուշում ձեր իմ նախկին,  
Ու իմ գոյը ես տանում եմ նրա մեջ.  
Այն ո՞վ էր, որ ինձ անվանեց առաջին –  
Առաջինը վերջնագծին ինձ գամեց:  
Ու տանում է հորիզոնը երեկվա  
Պաղ դիակիս ամփոփելու սնամեջ  
Այն տուփի մեջ , որ կոչվում է ապագա...  
Հեռանում եմ՝ որոնելով ինձ անվերջ:  
Սմենուրեք, ավեն ինչում, միշտ առկա՝  
Ես կամ այսօր՝ երեկվա ու վաղվա մեջ:

**2.**

Ես կամ այսօր՝ երեկվա ու վաղվա մեջ,  
Ես լոկ ձև եմ, ես ստվեր եմ իմ նախկին.  
Այն ո՞վ նետեց իմ վրա քարն առաջին,  
Ով էր, արդյոք, որ ինձ

ինձնից դուրս վանեց:  
Ով դադարեց ինձ ինձանից այսքան մեծ –  
Համր ու անկյանք

քարե արձան Աստրծու...  
Առաջինը ո՞վ իմ ձեռքով սպանվեց,  
Առաջինը ո՞վ ինձ սպանեց իմ ձեռքով:  
Ու քայլում եմ ստվերացած երկնքով,  
Ես կիսով դի և կիսով չափ դեռ անեղծ,  
Ժամանակի անչափելի եզերքով  
Քարշ եմ տալիս ուրվականն իմ  
սուտ ու կեղծ...

Այն ով էր, որ ինձ սպանեց իմ ձեռքով,  
Առաջինը ով իմ ձեռքով սպանվեց:

**3.**

Առաջինը ո՞վ իմ ձեռքով սպանվեց,  
Եվ ում առաջ պիտի ծնկեմ մեղավոր: –  
Նախամեղը «պին ու չնչին» մի խնձոր,  
Որի համար երկինքն ինձ

«գող» համարեց:  
Ո՞վ «մեղսագործ» խարանեց  
իմ ճակատին,  
Դատապարտեց ինձ կրելու մեղք իմ հոր,  
Ո՞վ դարձրեց ինձ մուրացիկ դրախտի,  
Ո՞վ դարձրեց ինձ դժոխքի թագավոր...  
Եվ ես անվերջ արարելով ինձ կրկին,  
Ես բնական, մի բանական մտագար,  
Կմոտենամ ինձ, ինձ կապող կամրջին,  
Դեն նետելով թե մեղավոր, թե արդար,  
Ու կարարվեմ նորից Ջրից ու Հողից  
Եվ ես կրկին կմոտենամ ինձ կրկին:

**4.**

Եվ ես կրկին կմոտենամ ինձ նորից  
Եվ ճակատս պիտի դրոշմը նգովքի  
Երկրի մաքուր ցողով պիտի լվամ  
Առած մի նոր մարմին, գտած նոր հոգի,  
Որ ստվերս անկյանք նորից մարդանա...  
Եվ թույլ ու խեղճ իմ ասքերը լուսնոտի  
Պիտի կրկին երկրային փայլ ստանան,  
Եվ դեն նետեմ մղձավանջն այս հնոտի...  
Մերկամաքուր նախահոր պես իմ նորից  
Կզգամ դարձյալ տենչն այն  
հսկա կարոտի,  
Այն կարոտի, որ ժառանգել եմ հողից, –  
Այն, որ միշտ կա թե ծառի մեջ,  
թե խոտի...  
Ես՝ արարված երկրի կավե խմորից –  
Մարդն արարիչ, Հայրը մարդու և Որդին:



**Степанакерт – один из самых чистых городов мира**

Степанакерт – один из самых чистых столичных городов в мире. Это утверждение имеет и научные основания: геохимический паспорт города.

Об этом в беседе с Armtimes.com сказала замдиректора по научной части Центра эколого-ноосферных исследований, руководитель отдела геохимии окружающей среды Лилит Саакян.

«Первым делом мы занялись геохимическим исследованием в Степанакерте. За мои 16 лет научной работы это первый случай, когда в исследуемом городе не было выявлено заметных последствий антропогенного стресса», – сказала Лилит Саакян.

По словам кандидата географических наук, а также советника одного из отделов научного центра НКР, с 2011 года при софинансировании Госкомитета по науке министерства образования и науки РА и ми-

нистерства образования Арцаха Центр эколого-ноосферных исследований провел на территории Арцаха геохимические исследования. Эти работы преследовали не только научные цели, но и были призваны подготовить специалистов для научного центра Арцаха, которые в дальнейшем смогут самостоятельно проводить исследования.

Результатом успешно проведенных научных работ стало исследование водных ресурсов и осадочных пород водосборных бассейнов НКР, осуществленное совместными усилиями Центра эколого-ноосферных исследований и научного центра Арцаха.

«У республики есть огромный потенциал для развития экологически чистого производства, соответствующего международным сельскохозяйственным стандартам», – сказала Лилит Саакян.

*NovostiNK.ru*

## Память об Армении на монетах Древнего Рима



Чудом сохранившиеся и дошедшие до наших дней из глубины веков денежные знаки могут рассказать о преданных забвению исторических событиях или политических деятелях много интересного.

В этом смысле крайне занимательны три старые римские монеты, датируемые вторым веком нашей эры. Попытаемся расшифровать отчеканенные на них своеобразные исторические ребусы.

В ту сложную и запутанную для Армении эпоху царь Тигран V Сохемос всходил на армянский престол аж целых два раза (144-161 и 164-186 гг. нашей эры). В первый раз царская корона досталась ему из рук римского императора Антонина Пия (Antoninus Pius). Именно это событие запечатлено на первой бронзовой монете: на аверсе (главной стороне монеты) изображен император и его имя, а на реверсе (оборотной стороне) – коронация Сохемоса и надпись на латинском: «Царя Армении дал» (Rex Armen Dat). После смерти императора Антонина Пия парфянское войско совершает нашествие на Великую Армению, наносит сокрушительный удар Сохемосу и передает

власть своему ставленнику, царю Бакуру I, а Сохемос перебирается в Рим.

Спустя год Рим одерживает победу над парфянами, после чего согласно договору к Римской империи переходит Западная часть Месопотамии, а Армения провозглашается независимой, но управлять ею должен царь, назначенный Римом. Так, в 164 году римляне во второй раз коронуют Тиграна V Сохемоса. В этот период одновременно царствовали Луций Вер (Lucius Verus) и Марк Аврелий. Луций Вер получил прозвище «Армениякус» (Armeniacus) после захвата Армении римской армией.

На аверсе золотой монеты отчеканен император Луций Вер и обозначено его имя, а на реверсе – вторая коронация Сохемоса и надпись на латинском «Царя Армении дал».

На лицевой части последней серебряной монеты изображен Луций Вер, а на обороте изображена армянка как символ Армении и отчеканена надпись – «Армен».

*Рубен ШУХЯН.*

## «Горцарар»

Издается с июля 1999г.

**Автор проекта и учредитель –  
Ваграм БЕКЧЯН**

**Зам. гл. редактора –  
Роза ГУЛЯН**

**Գլխ. խմբագրի տեղակալ՝  
Ռոզա ԳՈՐԾԱՐԱՐ**

**ИЗДАТЕЛЬ**

Издательский Дом

**«ШАГАНЭ»**

Лицензия серия ИД № 02313

Журнал зарегистрирован  
в Министерстве Российской Федерации  
по делам печати, телерадиовещания  
и средств массовых коммуникаций  
**Регистрационный номер  
ПИ № 77-5015**

Авторские материалы

не рецензируются и не возвращаются.

Переписку с читателями редакция  
не ведет. Мнение авторов может  
не совпадать с мнением редакции.

Материалы со знаком **Ч** публикуются  
на правах рекламы.

Редакция не несет ответственности  
за содержание рекламных объявлений.

**ПЕРИОДИЧНОСТЬ ВЫХОДА - ЕЖЕМЕСЯЧНО**

Отпечатано

ОАО «Калужская типография стандартов» г. Калуга, ул. Московская 256.

Формат А3, объём 4,0 п.л.

Тираж 1 500 экз. Зак. № 103.

Территория распространения:  
Российская Федерация, страны СНГ,  
зарубежные страны.

В номере использованы материалы  
«НОВЕ КОВЧЕ», «АЗГ», «АРАВОТ»,  
«ГА», «ЕТЕР», «ՖԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»,  
«ԻՐԱՎԱՆԿ», «ՎՅՈՆԻ», «НОВОЕ ВРЕМЯ».

**Цена свободная.**

**Адрес издательства и редакции:**

**248001, г. Калуга,  
ул. Суворова, 160.**

**Тел.: (4842) 56-59-29.**

**E-Mail: gortsarar@list.ru  
факс (4842) 565-929,**

**www.gortsarar.ru**



**E-Mail: gortsarar@list.ru**